Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1902

1877

1999

43734-Ա.Հ.

ՓՈՔՐԻԿ ՄԷԳՆ

ՈՒ

ՆՈՐԱ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Գրած պէշին Սպրեպանի

Թարգմանեց

Օր. ԴԱՐԻԱ ԳՈՒՍԱՐԵԱՆՑ

1620

ԳՐԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ-Арм. ССР
Ա. Մեսրոպյան
անվան անվանակոչման

Հայ. 5081

28264-62

ՏԻՖԼԻԶ

Տպարան Յովհաննէսի Մարտիրոսեանց:

1877

Дозволено цензурою. Тифлисъ, 29 Сентября 1877 г.

1902.ԼԱ
1909

Типографія Мартиросіанца, на Орбеліановской улицѣ д. № 5.

ԳԼՈՒԽ I.

Որբեր։

Եթէ մի իսկական լաբիւրինթոս կայ, դա անկասկած Լօնդօնի արևելեան ծայրի այն մասն է, որ գտնւում է Սուրբ Պօղոսի մայր եկեղեցուց մի մղոնաչափ հեռաւորութեամբ, նոյն իսկ նաւահանգստի մօտ։ Այնտեղ այնքան շատ փողոցներ ու ոլոր մոլոր ճանապարհներ կան, որոնք կտրտում են միմեանց և միանում են միմեանց հետ, որ առանց ուղեկցի մարդ անպատճառ կմոլորուի։ Ամենալայն փողոցներով էլի կարող է երկՁի կառք անցնել, բայց կան և այնպիսիք, ուր որ և է մի ձիով սայլի տեղ միայն կայ, նոքա այնքան նեղն, որ փողոցների դիմացի կողմի հարևանները իւրեանց պատուհաններից աղատ կարողէին միմեանց ձեռքերը բռնել, եթէ միայն մոտՁէին նոքա այս։ Այդտեղ շատ բարձր տներ կան երեք—չորս յարկով, նոցա պատերը դրսից և ներսից կեղտոտած են ու ծխից սևացած, իսկ պատուհանները հազիւ են անցկացնում մինչև անդամ նուազ լոյսը, որ

կարողանում է մտնել նեղ ու ահագին շինութիւնների մէջ տեղը։

Մի քանի տարի սրանից առաջ՝ այս մեայլ փողոցներից մէկում կար մի աւելի մութ դալարուն փողոց. նորան անուանում էին Էնդէլ-Կօրա (հրեշտակների դուռ), կարծես թէ այդ մթնավայրերի կեղտոտ բնակիչների մէջ պահում էր մի մութն յիշատակութիւն մի որև է այլ, աւելի լուսաւոր տեղի և այլ երջանիկ էակների մասին։ Էնդէլ-Կօրաը ինն ոտնաչափ շրջակայք ունէր. նորա երկու կողքերին մինը միւսի ետևից կպած էին տաս—տասներկու տուն, իսկ ներքև կառուցած էր եռայարկ շինութիւն, որ բռնած ունէր փողոցի կողմի անցքը և որի պատուհանները նայում էին դէպի նեղ սալայատակ փողոցը. պատուհանների մէջերը պարաններ էին անցուցած, և նոցա վերայ կախած էին բնակիչների դեղին, անմաքուր լուացած շորերը։ Կարմիր կղմինտրեայ ծածկի տակ երկու վերնայարկ բնակարան էլ կար, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած էր ութնական սենեկից, և իւրաքանչիւր սենեկում առանձին ընտանիք էր բնակւում։ Երկու սենեակ ունենալը արդէն երևելի ճոխութիւն էր համարւում։

Վերնայարկում բնակուիլը, 'ի հարկէ, աւելի լաւ էր ներքնայարկից. այնտեղի օդը աւելի մաքուր էր և լոյսը առատ։ Փոքրիկ լուսամուտներից չէ թէ միայն փոքրիկ դուռն էր երևում, այլ և բազմաթիւ տանիքներ, որոց մէջ տեղ տեղ բարձրանում էին եկեղեցեաց սրածայր գմբէթները, իսկ նորանց ետևը բաժանվում էին երկնքի լուսաւոր մասները, երբ արեգակը ծածկւում էր մէգի ու ծխի խիտ ծիրանի ամպերի տակ։ Ողորուն սանդուղքը բարձրանալով դէպի վերնայարկը աւելի ևս գալարում էր և շատ քիչ ցանկացողներ կային նորա վերայով բարձրանալու ու ցածրանալու, այն ինչ ներքնայարկի բնակիչների դռների մօտ անդադար վազվզողներ կային։ Ապա ուրեմն վերնայարկում աւելի հանգիստ էր ու աւելի շատ տեղ կար պահելու։ Եւ յիրաւի, հէնց այս պատճառները ստիպեցին նաւաստիի կնոջը իւր երեք որդւոց հետ ներքին սենեկից վերև փոխադրուել, մի տարուանը սկզբից հաստատուելով։

Նա իւր մարդու ճանապարհ դնելուց առաջ հիւանդանալով՝ հետզհետէ սկսում էր ծանրանալ, այնպէս որ վերջապէս անկողնի մոտ և արդէն մի քանի շաբաթ չվերկացաւ և տանից դուրս չգնաց։ Նա հարևանների օգնութիւնը բոլորովին մերժեց և նոքա էլ շատ աջարկեցին նրան իւրեանց ծառայութիւնը։ Նորա միակ պահողը իւր մեծ աղջիկն էր, մի փոքրիկ նիհար ու տկար աղջիկ, որպիսիք շատ կան Լօնդօնում, որ այժմ կատարում էր տանտիկնի բոլոր պարտաւորութիւնները իւրեանց ամենահամեստ օրական ծախքով։ Նա տասն տարեկանի տեսք ունէր, իսկ նորա հոդացող դէմքին, ճակատի ու աչքերի մօտի ծալուածքներին նայելով՝ հասակաւոր կին կարելի էր համարել։ Նորա փոքրիկ, վտիտ ձեռները աշխատանքից կոշտացած էին, և երբ նա իւրեանց նեղ սենեկում մտն էր դալիս անկողնից դէպի վառարանը և պատուհանից՝ ճանչող դուռը, որտեղից քամին փչում էր նորա հիւանդ մօր վերայ—իւր դանդաղ ու հանդարտ շարժուածքով, նա աւելի աշխատելուց վաստակած կնոջ

նման էր քան մի երեխայի։ Ի հարկէ, սենեակը այնքան փոքր էր, որ մեծ աշխատանք չէր պահանջում, բայց փոքրիկ Մէգը մի քանի գիշեր չէր քնել, հիւանդի մօտ նստած լինելով, և նորա աչքերը անքնութիւնից ծանրացել էին, իսկ նոցա մօտի սեւագոյն շրջանակները օրէց օր մեծանում էին։

Երեկոյացաւ։ Փոքրիկ Մէգի մայրը գլուխը մի բանի վերայ թեքելով՝ հեւում էր լուսի վերջին ճառագայթներին, որոնք այրում էին ծխնելոյզների ու եկեղեցիների եռևը, յետոյ թոյլ կերպով գլուխը դարձրեց դէպի վառարանը, ուր այրում էր մի բուռն ածուխ։ Վառարանի մօտ նստած էր նորա փոքր աղջիկը, որ մեերկացնում էր ու օրօրում միամեայ մանկան։ Միւս երեխան արդէն քնած էր կոպիտ կապերտի վերայ տան մի անկիւնում. մայրը չէր տեսնում նորան. նա անդադար նայում էր Մէգի բոլոր շարժուածքին և մի անբնական լուսով այրում էին նորա մեռնող աչքերը։ Երեխան աղջկանից օրօրուելով՝ վերջապէս քնեց։ Մէգը նորան պառկեցրեց գետնին փռած կապերտի վերայ և կամաց վերադառնալով նորից կրակի մօտ, կանգնեց այնտեղ երկու բոպէ, մտածելով նայելով կարմիր ածխի վերայ։

—Մէգ,—կանչեց մայրը ցածր բայց պարզ ձայնով։

Աղջիկը նոյնպիսի հաւասար ու ցածր քայլերով մօտեցաւ մահճակալին և քնքոյշ հոգացողութեամբ նայեց մօր դէմքին։

—Դու գիտես, որ ես շուտ պիտի մեռնեմ, ասաց հիւանդը։

—Այո՛, կարճ պատասխանեց Մէգը։

—Հայրդ շուտով տուն կ'վերադառնայ, շարունակեց հիւանդը, իսկ մինչև այն ժամանակ որդիքս քեզ եմ յանձնում։ Ես ամէն բան կարգադրել եմ տ. Գրիգորի հետ—ներքևը, հօրդ բացակայութեան ժամանակ ոչ ոք չի անհանգիստ անի ձեզ։ Բայց, Մէգ, դու էլ զգոյշ կաց. ոչ ոքի հետ մի ծանօթանալ, ոչ ոքի մօտ մի գնալ։ Այստեղ տանը վատ մարդիկ շատ կան։ Մէգ, կարող ես դու գաղտնիք պահել։

—Այո՛, կարող եմ, պատասխանեց Մէգը։

—Ես էլ այդպէս եմ կարծում, ասաց մայրը.—ուստի և ես կ'ասեմ քեզ թէ ինչո՞ւ դու այստեղի բնակիչներից ոչ ոքի մօտ չպիտի գնաս։ Մահճակալի տակից անդուկը հանիր։

Անդուկը շատ խոշոր էր պատին կպցրած, նա բոլորովին չէր երևում մահճակալի տակից։ Սակայն Մէգը մեծ ուժով դուրս քաշեց այն. նաւաստիի կինը բարձի տակից մի բանալի հանեց և տուաւ իւր աղջկան։ Մէգը բարձրացրեց ծածկը և մեռնողի աչքերը սիրով ընկան նորանում դարսած բանեցրած շորերի վերայ, որոնք էին—մաքուր շալեր, նոյնպիսի շոր և մախմուրեայ գլխարկ, որ նա հագնում էր, երբ նորա մարդը վերադառնում էր ծովային ճանապարհորդութիւնից։ Մէգը զգուշութեամբ մէկ մէկ հանեց բոլորը, դարսեց անկողնի վերայ և ուրախութեամբ նայում էր նոցա իւրաքանչիւր ծալուածքին։ Այնտեղ էին նորա շորերն էլ, նորա փոքրիկ քրոջ շորերն էլ, Ռոբէնի կապոյտ գլխարկն էլ, որը լոյս աշխարհ էր տեսնում միայն հօր վերադառնալիս։ Վերջապէս նա

ամեն բան հանեց սնդուկից, մնաց միայն մի ինչ որ փոքր, բայց ծանր պարկ։

—Ահա իմ գաղտնիքը, Մէգ.—շշնջաց մայրը։ Գոբանում քառասուն ռակեայ սովերէն *) կայ. նոքա ոչ ինձ են պատկանում, ոչ էլ հօրդ, այլ նորա ընկերներից մէկին, որը մեզ պահ տուեց այն։ Ես հանգիստ չեմ մեռնի, եթէ չհամոզուեմ, որ այս փողերը ապահով են։ Խնդրում եմ, Մէգ, երբէք, երբէք ոչ ոքի չթողնես այստեղ, մինչև հօրդ գալը։

—Ո՛չ ոքի չեմ թողնի այստեղ, մայրիկ, պատասխանեց աղջիկը։

—Մասամբ էլ այս բանը ստիպեց ինձ ներքնայարկից այստեղ փոխադրուիլ, շարունակեց հիւանդը։ Եթէ ներքև բնակուող բոլոր մարդիք իմանան, որ դուք փող ունիք, նոքա չեն մերժի ձեզ բոլորիդ էլ սպանել՝ այն դրամը ձեռք ձգելու համար։ Դուռը միշտ կողպէքով փակիր, թէ տանը լինես և թէ դուրս գնաս. ահա պարկ եմ կարել, որ դու երբէք փղնդ չպիտի հանես, նորա մէջ կդնեմ ես սնդուկի բանալին և ծախսի փողը, նա քեզ բաւական է մինչև հօրդ գալը։ Եթէ մարդ կ'հարցնի թէ երբ կ'դառնայ հայրդ, ասա թէ այսօր կամ վաղը։ Նա մի ամսից յետոյ կդայ, ուղիղ Ռօբէնի Ծննդեան օրը։ Մի՞թող է, Մէգ, ինչ որ ասացի քեզ։

—Այո՛, պատասխանեց աղջիկը։ Ես պիտի հոգ տանեմ երեխայից վերայ, պահպանեմ փողերը, որոնք պատկանում են հօրս ընկերոջ, միշտ պիտի վրաս կրեմ

*) Անգղիական դրամ է իւրաքանչիւրը 6,26 ռուբլի արժողութեամբ։

պարկը բանալիով և դուռս կողպած պահեմ։ Հարևաններին ասեմ, որ հայրս այսօր կամ վաղը կգայ և ոչ ոքի երբէք սենեակը չթողնեմ։

—Լա՛ւ, շշնջաց մեռնողը։ Իմ թաղման մասին մի՛ մտածես, Մէգ. ես արդէն ամեն բան կարգադրել եմ ա. Գրիգի և դադաղ շինողների հետ. ձեզ միայն մնում է սպասել այստեղ, մինչև որ նոքա կգան և կտանեն ինձ։ Եթէ կամենաս ուղեկցիր ինձ երեխայիս և Ռօբէնի հետ, միայն նախ քան կերթաս, դուռը կողպէքով փակիր։

Նա մի քանի րոպէ լուռ պառկած էր, շոշափելով իւրաքանչիւր կոտորը կարդով, մինչ Մէգը նորից սնդուկն էր դարսում, փակելով այն՝ աղջիկը բանալին պարկը դրաւ, որ մայրը կախել էր նորա վզից։

—Մէգ, ասաց վերջինը. մի՞թէ է, որ մենք մի կիւրակէ երեկոյ քարոզ էինք լսում։

—Այո՛, մայրիկ, շտապով պատասխանեց աղջիկը։

—Այն ի՞նչ խօսքեր էին, որ քարոզիչը միշտ կրկնում էր, շշնջաց մայրը. դու միանգամ ուսումնասիրում էլ ես սովորել այն։

—Ես այժմ էլ յիշում եմ այն խօսքերը, ասաց Մէգը.—«Արդ՝ եթէ դուք, որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել հայրն ձեր որ յերկինս է, տացէ բարիս այնոցիկ՝ որ խնդրեն զնա»։

—Այո՛, այո՛, հենց այդ է, կամաց ասաց մեռնողը։ Նա այն էլ ասաց, որ մենք չպիտի ուշացնենք, այլ Աստծուց ողորմութիւն պիտի խնդրենք այժմ, հենց իսկոյն, որովհետև Աստուած ուղարկեց մեզ մօտ մինչև

անգամ իր որդին, որը մեզ փրկեց և մեր տեղը մեռաւ։ «Նորան խնդրողներին, Նորան խնդրողներին» կրկնում էր նա անդադար։ Ա՜խ, բայց քանի անգամ ես խնդրել եմ, որ Աստուած ինձ կենդանի պահէր մինչև հօրդ վերադառնալը կամ թէ երեխաս էլ հետս գար։

—Ուղիղ է. դա լաւ բան չէր լինի ասաց Մէգը։ Աստուած աւելի լաւ գիտէ, թէ ինչ բան մեզ համար լաւ է և ինչ վատ։

Մեռնող մայրը մի փոքր միջոց մտածեց այս խօսքերի վերայ և վերջապէս Նորա վաստակած դէմքի վերայով մի թոյլ ժպիտ անցաւ։

—Է՛հ, գոնէ լաւ կլինի, որ խնդրեմ Նորանից թողնել իմ մեղքերը և մեռնելուցս յետոյ տանի ինձ իւր մօտ երկինքը, այսպէս չէ՞, Մէգ։

—Այո՛, այդ անպատճառ լաւ կլինի, մտածելով պատասխանեց Մէգը։

—Ուրեմն ես ամբողջ գիշեր կ'խնդրեմ Նորանից այդ, ասաց մայրը. կ'խնդրեմ նոյնպէս, որ Նա հոգայ ձեր երեքիդ մասին մինչև հայրդ կգայ։ Այս էլ մի առանձին օգնութիւն կլինէր Նորանից։ Նա խոր հառաչելով երեսը դէպի պատը դարձրեց և աչքերը փակեց, իսկ նորա շրթունքները երբեմն երբեմն կամաց շարժւում էին։ Փոքրիկ Մէգը կրակի մօտ նստած ինքն իրան ծածուկ լաց էր լինում, և վերջապէս ցաւից ու յոգնածութիւնից՝ սկսեց նիրհել։ Նա երազում տեսաւ, իբր թէ հօր նաւը մօտեցել է նաւահանգստին, և նա մօր ու մանուկների հետ աղմկած փողոցովը առաջ է գնում թանկագին հիւրին։ Բայց

յանկարծ նա վեր թռաւ ու զարթնեց։ Կամաց մտենալով մօրը՝ նա իւր փոքրիկ տաք ձեռքը դրեց նորա ձեռքի վերայ։ Այս ձեռքը սառն էր ինչպէս սառոյց. Մէգը դեռ երբէք այսպիսի սառնութիւն չէր զգացել։ Նորա մայրը չշարժուեց և չպատասխանեց խեղճի կանչելուն ու արտասուքներին և աղջիկը սրանից իմացաւ, որ նա մեռած է։

ԳԼՈՒԽ II.

Փոքրիկ Մէգը թաղում է մօրը։

Ամբողջ հետևեալ օր ու գիշեր մօր մարմինը անշարժ դրուած էր այն սենեկում, ուր բնակվում էին նորա երեք որդիքը։ Սկզբում Մէգը դառնութեամբ լաց էր լինում, բայց զարթեցան Ռոբէնն ու մանուկը և նա ստիպուած էր խնամել մէկին և խաղալ միւսի հետ, երբ ծիծաղեց և սկսեց թոթովել։ Ռոբէնը մօտ վեց տարեկան էր. նա մութ հասկացողութիւն ունէր մահուան մասին, որովհետև շատ անգամ հետաքրքիր մանուկների խմբի հետ գնում էր հանդիսին, երբ նոցա տանը օվ և լցէ մեռնում էր և գնալով մինչև հեռաւոր գերեզմանատունը՝ մտնում էր գերեզմանին՝ մէջը նայելու համար, որ նա թաւում էր նորան ինչպէս մի զարհուրելի և մութ անդունդ։ Այժմ, երբ փոքրիկ Մէգն ասաց նորան, թէ մայրը մեռել է, և բարձրացրեց նորան անկողնի մօտ, որպէս զի վերջին անգամ էլ համբուրէ նորա սառած շրթունքները, տղայի սրտին երկիւղ պատեց և նա կամեցաւ յետ

դառնալ այդ հարազատ պատկերից, որ արդէն դրժ-
գունացել էր և աւելի խոցուած էր, քան թէ
կեանքի վերջին ժամանակներումն էր։ Մանուկ աղ-
ջիկն էլ ձեռքը կամաց քսում էր մօր այտին և ծի-
ծաղելով դառում էր, մայրիկ, մայրիկ, մինչև որ Մէգը
հեռացրեց նորան այնտեղից։ Աղջիկը մանկան իրան
կպցնելով՝ անկողնի մօտ նստած էր յատակի վերայ և
դառնութեամբ լաց էր լինում։

—Դու այլ ևս մայր չունիս, մանկիկ, այժմ ես եմ
միայն քեզ մօտ, ասում էր փոքրիկ Մէգը։ Նա մի
փոքր միջոց այնպէս լուռ նստած էր, իսկ Ռօբէնը
պառկած էր նորա մօտ յատակի վերայ, դէմքը նորա
հնոտի շորի մէջ թաղցրած. սակայն շուտով մանկիկը
սկսեց ողբալին ճչալ, և աղջիկը սոխպուած էր իւր
ցաւը մոռանալ՝ նորան մխիթարելու համար։

—Սուս, սուս, սիրելիս—սկսեց նուազել Մէգը, վեր-
կենալով ու նորա հետ միասին մանգալով սենեկում,
ննջէ մանկիկս, օրօր, օրօր մանկիկս օրօր։

Աղջկայ տխուր ձայնը դառաւ աւելի հանդարտ,
ծանր և նորա դեղեցիկ օրօրից մանուկը մոռաւ խոր
քնի մէջ։ Նա պառկացրեց նորան Ռօբէնի կապերտի
վերայ, ծածկելով նորան հնոտի շորով։ Այն ինչ Ռօ-
բէնը կանգնած էր ոտի վերայ մօր անկողնի ոտների
մօտ և նայում էր նորան առանց արտասուելու, լայն
—բացած աչքերով։ Մէգը վերմակի ծայրը կամաց
ծածկեց մեռածի դժգոյն ու խիստ դէմքի վերայ։

—Ռօբբի, ասաց նա. մի քիչ ժամանակ պատու-
հանի մօտ նստենք։

Նոքա կոտրած սիմուտի օգնութեամբ բարձրա-

ցան լուսամուտի տախտակի վերայ և Մէգը գրկեց տղա-
յին, որպէս զի վայր չընկնի։ Այժմ նոքա տեսնում էին
ամբողջ Լնդէլ—Կօրսը և նորա եաւի փողոցը, նոյն-
պէս և հարևան տների թշուառ բնակիչների ամբողջ
խառնի խուռն խումբը։ Ներքևը հեռու, սալայատա-
կի վերայ վազվզում էին կիսամերկ, կիսակուշտ մա-
նուկները, և նոցա աղաղակները հասնում էին մինչև
Մէգի ու Ռօբբիի օդային ապաստանարանը։ Վերջին
ժամանակները մայրը արգելել էր նոցա երկուսին էլ
փողոցում վազվզել ու խաղալ, այնպէս որ այն մա-
նուկներից շատերին միայն կերպարանքից էին ճանա-
չում։ Ժամանակ առ ժամանակ քոյր ու եղբայրը յետ
էին նայում սենեակը, մօր անշարժ կերպարանքին,
որ բոլորովին հեռուում էր նոցա իւր կիսաբաց աչ-
քերով։ Մանուկները կամաց էին խօսում միմեանց
հետ։

—Մայրիկը կերթայ այժմ հրեշտակների հետ բնա-
կուելու, ասաց Մէգը։

—Ի՞նչ է նշանակում հրեշտակ, հարցրեց Ռօբէնը՝
իւր փայլուն սև աչքերով նայելով անկողնին, ուր
պառկած էր նոցա մայրը խոր, անզարթնելի քնով։

—Է՛հ, լաւ չեմ կարող հասկացնել քեզ, պատաս-
խանեց Մէգը. գիտեմ միայն, որ այն գեղեցիկ էակ-
ները, միշտ այնպէս սպիտակ, մաքուր ու փայլուն են,
ինչպէս այ էն—հեռաւոր սպիտակ ամպիկը։ Նոքա
ուր որ բնակւում են բարձր երկնքում, ուր միշտ ա-
րև է և երբէք ամպ չի լինում։

—Մայրիկը ի՞նչպէս պիտի գնայ այնտեղ, հարց-
րեց Ռօբէնը։

—Դե՛հ, կարելի է երբ Նորան գերեզման կիջեցնեն, հրեշտակները կգան և կտանեն Նորան, փոքր մտածելուց յետոյ պատասխանեց Մէգը։ Ես միանգամ կարդացի մի ողբմելի աղքատի մասին, որ շատ չարչարուել էր և երբ մեռել էր հրեշտակները ուր որ տարել էին Նորան։ Գուցէ Նոքա կգան մայրիկին տանելու գիշերով, այլ ինձ թւում է, թէ Նոքա առհասարակ սպասում են մինչև մարդու կթաղեն և յետոյ արդէն կ'տանեն Նորան։

Նոքա դարձեալ լռեցին և նստած էին նայելով ներքևի կուռող մանուկներին և փողոցում թափառող հարբած մարդոց ու կանանց։ Երբեմնապէս յանկարծակի լսւում էր սուր ձայն—դա որև է բարկացած մոր ձայն էր, որ դուրս էր վազում ծեծելու նորան կամ Նորան մանուկների աղմկայոյզ խմբից և կամ հարբածներին դուրս անելու։ Մանուկները փողոցից լսում էին միայն երեխայոց մութ խօսակցութիւնն ու աղմուկը, բայց Նոքա շատ լաւ տեսնում էին սպիտակ թեթև առկերը, որոնք լողում էին նոցա գլխին առ պի մէջ և որոնք փոքրիկ Մէգին թւում էին այն հրեշտակների թևեր, որոնք շրջելով փողոցների վերայով՝ սպասում էին նոցա մոր գերեզման դրուելուն։

—Մէգ, ասաց Ռօբէնը, ինչո՞ւ մեր այս փողոցը Էնգէլ-Կօրա են անուանում. մի՞թէ այստեղ միշտ հրեշտակներ են ապրել։

—Չեմ կարծում, թէ Նոքա երբ և իցէ կարողանային ապրել այստեղ, տխրութեամբ պատասխանեց նա. կամ թէ այս շատ վաղ կլիներ։ Գուցէ Նոքա այժմ չեն կարողանում այստեղ գալ, դորա համար էլ

սպասում են մայրիկին գերեզման դրուելուն, որ յետոյ տանեն Նորան երկինք։

—Մէգ, շշնջաց Ռօբէնը, խիստ կպչելով Նորան. ի՞նչ բան է սատանան»

—Օ՛հ, չգիտեմ, գոչեց Մէգը, ես միայն հաւատացած եմ, որ նա զարհուրելի, զարհուրելի վատ է։

—Այնպէս, ինչպէս հայրս, երբ հարբած է լինում, հարցրեց Ռօբէնը։

—Հազար անգամ աւելի վատ, տաքացած ասաց Մէգը։ Հայրիկը շուտ շուտ չի խմում. վատ տղայ մի լինիր և բան մի ասի դորա մասին։

Մէգը միշտ առանձնապէս հոգում էր, որ ծածկի հօր պակասութիւնները, և այս անգամ նա այնպիսի եռանդով ու համոզմամբ էր խօսում, որ Նորա խօսքերը խիստ ներգործեցին Ռօբէնի վերայ։ Մի քանի բոպէ նա լուռ կացաւ։

—Մէգ, հարցրեց նա վերջապէս. երբ և իցէ կարող է սատանան այստեղ գալ։

—Չեմ կարծում, պատասխանեց նա, կամաց շարժելով իւր փոքրիկ գլուխը. ես Նորան երբէք չեմ տեսել։ Ինձ թւում է, թէ մարդիք առանց Նորան էլ շատ չարութիւններ կարող են գործել։ Ո՛չ, ո՛չ, Ռօբբի, մի՛ վախիր, Նորան երբէք չես տեսնի։

—Ես կուզէի, որ երբէք ո՛չ մի սատանայ չլինէր, ասաց Ռօբէնը։

—Ես էլ կ'ցանկայի, որ Լօնդօնում բոլորն էլ բարի լինէին, ասաց Մէգը։

Նոքա մի քանի մինչ էլ նստած մնացին պատուհանի նեղ առաջնատախտակի վերայ, հեռևելով տանիքների վերայով թռչկոտող ու ճռուողող ճնճղուկ-

ներին, նայելով թէ ինչպէս գիշերային մէգը բարձրանում էր հեռաւոր, նոցա անտեսանելի գետից, կաղամելով բարձր կայմնաձև ստուերներ, որոնք շնորհիւ նրանց էլ բարձր էին լինում: Փողոցում արդէն մթնում էր, այստեղ ու այնտեղ պատուհաններում փայլփայլում էին ճրագներ, աղօտ լուսաւորելով մթան մէջ:

Մանկիկը զարթնելով՝ լայ եղաւ: Մէգը վայր բերեց Ռօբէնին նորա վանդակաւոր աթոռից և միքանի կտոր ածուխ դնելով վառարանի մէջ ջուր եռացրեց թէյի համար: Նա առաջ էլ մօր հրամանաւ շուտ շուտ կատարում էր այդ գործը, իսկ այժմ բանն ուրիշ էր: Մօր ձայնը լռած էր, և Մէգը ստիպուած էր ամէն բանի վերայ ինքնին մտածել: Թէյ խմելուց յետոյ նա մերկացրեց մանուկներին ու պառկացրեց, որոնք շուտով քնեցին: Երբ նորա օրական հոգերը աւարտուեցան և վառարանի կրակը հանգաւ՝ փոքրիկ Մէգը պառկեց մի անպիտան կապերաի վերայ երեխայոց կարգումը, երեսը դարձրած դէպի մօր անկողինը, հրեշտակներին տեսնելու համար, եթէ նոքա կ'գային մօր մօտ: Բայց վաղուց արդէն նորա քունը տանում էր, և հաղիւ թէ գլուխը դրաւ բարձի վերայ՝ ձեռքը կամաց մեկնելով իւր մանուկների վերայ, մինչ իսկոյն ննջեց և խորը քնեց մինչև առաւօտ:

Հրեշտակները չեկան ամբողջ գիշերուայ ընթացքում, իսկ առաւօտը վաղ եկաւ հարևան դաղաղ շինողը երկու օգնականներով և տանտէր Միստեր Գրիդդը, որ բնակւում էր ամենաստորին յարկում և տարան Մէգի մօր դագաղը: Սպասելով մինչև որ ամենքը դուրս գնացին, աղջիկը կողպէքով փակեց դուռը, վերցրեց իւր մանկիկը ձեռքին, Ռօբէնն էլ նորա փեշից բռնեց և նոքա գնացին, մի փոքր հեռու դագաղը տանողներից, դժուարութեամբ անցնելով այն ամբոխի միջից, որ շարժւում էր փողոցում: Թաղման կարգը կատարեցին՝ նոցա գերեզմանատուն հասնելուց առաջ, սակայն Մէգը այնուամենայնիւ կարողացաւ Ռօբէնին ցոյց տալ գերեզմանի մէջ դագաղի տախտակը, քանի որ դագաղագործները դեռ հող չէին լցրել վրէն: Քոյր ու եղբայր նայում էին նոցա աշխատանքին տխուր, այլ մանկական հետաքրքրութեամբ: Երբ ամէն բան վերջացաւ՝ Մէգը խոցուած սրտով երեխայոց բերեց տուն, Էնգէլ—Կօրտի վերնայարկի որբացած սենեակը:

ԳԼՈՒԽ III.

Մէգը մաքրում է ու կարգաւորում:

Մի քանի օր շարունակ Մէգը ոչ մի տեղ չգընաց իւր սենեկից, խաղալով Ռօբէնի հետ և խնամելով մանկան: Նա միայն միքանի լոպէ դուրս էր գնում հարևան խանութից ալիւր կամ հաց գնելու համար: Սկզբում երկու թէ երեք հարևաններ ջանք էին անում բարձրանալ սանդղներից վերնայարկը, և փորձել բանալու նոցա սենեկի դուռը, բայց նա միշտ փակած էր լինում: Մէգը չէր բացանում այն միջոցին անգամ, երբ պատասխանում էր իրանց կո-

ցութիւնը խմանալու եկողների հարցերին: Նա ամեն անգամ պատասխանում էր, որ իրանք լաւ են ապրում, և հայրը այսօր կամ վաղը կվերադառնայ: Միստր Գրիգգը, նոցա խիստ տանտէրը, որից բոլորը շըջապատողները վախենում էին, հաստատ էր իւր այն խօսքին, որ տուել էր Մէգի մօրը—ոչ ոք չէր թողնում երեխայոց անհանգիստ անելու և խառնուելու աղջկայ հոգսերի մէջ. այսպիսով Էնդէլ—Կորտի բնակիչների դէպ'ի նաւաստիի երեք որբերն ունեցած վաղանցիկ կարեկցութիւնը շուտով փոխուեցաւ լիակատար սառնասրտութեան, և մինչև անգամ հետաքրքրութիւնն էլ անցաւ: Նոքա ամենքը շատ լաւ գիտէին հարևանների նիւթական միջոցները, և Մէգի սենեկի անշքութիւնը չէր գրաւում ոչինչ ուշադրութիւն և չէր գրգռում ոչինչ շահասիրութիւն, որովհետև ոչ ոք չէր էլ մտածում սնդուկի գոյութեան մասին: Վերնայարկի միւս մասի բնակիչ մատաղահաս աղջիկը վեց շաբաթով դուրս գնաց—նորան արբեցութեան ու անպարկեշտ վարքի համար փողոցներում՝ տարան ուղղութեան տուն: Այսպէս նաւաստիի կնոջ մեռնելուց յետոյ ամբողջ մի շաբաթ սանդղի վերայ ոչ մի կենդանի հոգի չէր եկ և էջ անում, բացի փոքրիկ Մէգից:

Մէգի սրտումը երկու բան կար և նա խիստ ուզում էր կատարել այս մինչև հօր գալը. Ռօբէնին այրբէն և մանկան միայնակ ման գալ սովորցնել: Ռօբէնը ընդունակ, ուրախ տղայ էր, և շուտով նա ինքը կամեցաւ հօրը զարմացնել իւր նոր գիտութիւններով. և ահա, Մէգի հետ միասին նոքա սկսան ջանասի-

բութեամբ կարդալ սովորել այն Աստուածաշնչի վերայ, որ տուել էին աղջկան ուսումնարանում, և որի վերայ ինքն սովորել էր մի փոքր բառերը որոշել: Բայց մանկան վերաբերեալ գործը դժուարացաւ: Նորա հետ չէր կարելի բաղդատել Էնդէլ-Կորտի մանուկներին, որոնցից շատերը փոքրիկ Մէգի քրօջից մեծ չէին, սակայն բոլորն էլ կարողանում էին արդէն թաւալ գլոր գալ ցեխոտ սալայատակի վերայ, ջանց.քները մանել, և մի քանիսն անգամ, թէպէտ և դեռ դժուարութեամբ, առանց կողմնակի օգնութեան ման էին գալի սալաքարերի շուրջը: Մէգը յանդիմանում էր ինքն իրան, որ նորա մանուկը միւսներից այդպէս յետ է մնացել, սակայն չնայելով բոլոր ջանքերին, այսքան միայն կարողացաւ անել, որ մանկիկը պինդ բռնելով աթոռից կամ Ռօբէնի ձեռքից, նայում էր իւր քրօջ, որը հրապուրելով քարշում էր մի կտոր հաց և մեղը: Նա մի նուազ ու հիւանդոտ մանուկ էր տգեղ կերպարանքով, որ կիսած խնձորի պէս նման էր Մէգին. մանկան անդամները շատ թոյլ էին, և անկարելի էր թուում, թէ նոքա երբ և իցէ այժ կստանային նորա փոքրիկ ու նուազ մարմինը պահպանելու համար: Բայց ժամանակ առ ժամանակ մանկան վարտ դէմքի վերայ և տխրատեսիլ աչքերի մէջ յանկարծակի մի այնպիսի քաղցր ժպիտ էր լոյս ընկնում, որ Մէգը վերայ էր ընկնում նորան և սղմելով իւր կրծքին՝ ասում էր, որ նորանից լաւ երեխայ չկար աշխարհում: Մէգի փորձերը իւր մանկան մանգալ սովորցնելու՝ սովորաբար այդպիսի հետևանքի

էին հասնում, բայց նայելով դորան, նա օրը տասն անգամ դարձեալ պարապում էր այդ բանով։

Երբեմն, մանուկներին քնացնելով, փոքրիկ Մէգը բարձրանում էր պատուհանի առաջնատախտակի վերայ և նստում էր այնտեղ միայնակ, նայելով, թէ ինչպէս երկնքում, ուր գնաց նորա մայրը, մինը միւսի ետևից վառում էին աստղերը։ Մի քանի գիշերներ մինչը այնքան խիտ էր լինում, որ Մէգը չէր կարողանում տեսնել ոչ աստղերը և ոչ էլ փողոցների լապտերներից փայլող կէտերը. այդ ժամանակ նորան թւում էր, թէ նա, Ռօբէնն ու մանկիկը ապրում են մի որևէ բոլորովին առանձնացած տեղ, երկրից էլ ու երկնքից էլ հեռու։ Փոքր առ փոքր սովորցնելով Ռօբէնին Աստուածաշունչը կարդալ և ինքն էլ օրը երկու երեք անգամ կարդալով, նա նոր տեղեկութիւններ ստացաւ Աստծու ու նորա դէպի մարդիկ ունեցած սիրոյ մասին։ Շատ անգամ, մթան մէջ նստած, Մէգը աշխատում էր իւր մանկական գլխով, մտածելով շատ բան և պատուհանից դուրս նայելով մութ գիշերին, որ ծածկում էր մի ահագին թաղ, ուր նորան—որբին այնքան բազմաթիւ մարդիկ են շրջապատում, որոնցից մինը չգիտէր նորա միայնութիւնը, չէր զգում նորա ծանր կեանքը։

Մի շաբաթից յետոյ Մէգն ու նորա մանուկները գնացին նաւահանգիստը։ Ամենահեռաւոր անկիւնում կանգնելով, նոքա սպասում էին տեսնելու մի որևէ բարի հոգի, որից կարելին էր յուսալ թէ չէր ասի «գնա կորիր» բարկացոտ խօսքը և խմանար, թէ երբ կգայ հօր նաւը։ Շատ յաճախ էր պատահում, որ նոքա

քա հեռանում էին առանց բաւարար պատասխան ստանալու, սակայն գտնուեց վերջապէս մէկը, որ գիտէր «ովկիանական թագաւոր» նաւը և ասաց աղջկան, որ այդ նաւը կ'գայ Հոկտեմբերի վերջին։ Ռօբէնի ծննդեան օրը. դալիս էր ճիշտ այդ ամսի վերջին օրը—ուրեմն մօր հաշիւը ուղիղ էր։ Հայրիկը կվերադառնայ Ռօբբիի ծննդեան օրը. այնուամենայնիւ. Մէգի հոգացող դէմքը համարեա ամեն օր երևում էր նաւահանգստում, որ կրկին և կրկին անգամ ուրախ տեղեկութիւն լսի։

Հասաւ անհամբեր սպասած օրի նախընթաց օրը և Մէգը սկսեց սրբել ու մաքրել ամեն բան տանը, ինչպէս առաջ անում էր մայրը հօր տուն վերադառնալուց առաջ։ Ռօբէնին նստացնելով ամենաբարձր աթոռի վերայ և տալով նորան մանկիկը, ինքը սկսեց յատակը լուալ, և այնպէս աշխուժով լուանում էր ջրով, որ ստորին յարկի հարևանը վազեց նորա մօտ բարձրաձայն կռուելով ու սպառնալով, որ ստիպեց խեղճ աղջկան երկիւղից դողալու։ Երբ սենեակը կարգի դրեց վերջացաւ, Մէգը մի քանի անգամով ջուր լցրեց հին, կոտրատած տաշտը Ռօբէնին ու մանկան լողացնելու համար. սրա համար նա քիչ անգամ չվազվզեց վեր ու վայր բարձր սանդղի վերայով։ Երեկոյեան ուշ Մէգը վերջացրեց իւր գործերը և հիացած նայեց մաքրած սենեկին ու մանուկների թարմ դէմքերին։ Խեղճը շատ յոգնած էր, բայց, սուրբ գիրքը բանալով, որից այդ օրը չէր կարողացել դաս տալ Ռօբէնին, նա բարձր ձայնով կարդաց այս տունը. «Եկայք առիս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»։

—Ուրքան կ'ցանկայի ես գնալ Յիսուս Քրիստոսի մոտ, հառաջելով ասաց փոքրիկ Մէգը. ես այնքան ծանր աշխատեցի ամբողջ օրը, իսկ նա ասում է, թէ հանգիստ կտայ ինձ. սակայն ես դեռ չեմ իմանում, թէ ինչպէս գնամ Նորա մոտ։

Եւ գլուխը դնելով բարձի վերայ, քնած մանկան մոտ, ինքն աղջիկն էլ իսկոյն խորը քնեց։ Գուցէ փոքրիկ Մէգի հառաջանքը հասաւ Յիսուս Քրիստոսին, և նոյն իսկ Նա հանգստացրեց նորան, որովհետև Նա միշտ քուն է պարգևում Իւր ընտրածներին։

ԳԼՈՒԽ IV.

Փոքրիկ Մէգը տօնախմբութիւն է կազմում իւր մանուկների համար։

Ռօբէնի ծննդեան օրուայ առաւօտը պարզ ու պայծառ էր մինչև անգամ Էնգել—Կօրտի մութ ու ողոր մոլոր փողոցներում։ Մէգը զարթեցրեց մանկան, ձեռքերը քսելով նորա քնաթաթախ դէմքին և աշխատելով իւր փոքրիկ մատներով բարձրացնել նորա արտևանունքները։ Նա աշխուժով վեր թռաւ. նա թեթև էր բաւականին, ինչու որ այսօր հայրը պիտի գար։ Այսօր առաջին անգամ մօր մահից յետոյ աղջիկը դուրս քաշեց մահճակալի տակից սընդուկը և զգուշութեամբ բարձրացրեց ծածկը։ Նա գիտէր, որ տանից տօն օրուայ շորերով դուրս գնալը անհնար էր, քանի որ հօր պաշտպանութեան տակ չէին. նա շատ անգամ տեսել էր, թէ ինչպէս Էնգել-Կօրտի փողոցում շրջող լաւ հագնուած մանուկներին

խաբէութեամբ գրաւում էին, նախ քան կհասնէին մեծ փողոցներին, ուր շուտ կարող էին պաշտպանութիւն գտնել։

Սակայն Մէգը վճռեց, որ Ռօբէնն ու մանկիկը չգիմաւորեն հօրը ցնցոտիներով՝ ուստի և նա առանձին կապեց մանկան հանդերձն ու գլխարկը, որոնք արդէն փոքր էին նորա համար և Ռօբէնի երկնագոյն գլխարկն ու քաթանէ մթնագոյն առաջնարկը. յետոյ նայեց իւր կարմիր զգեստին ու կանաչ ժապաւէններով գլխարկին. նա շատ ցանկանում էր հագնել նորանց, բայց նա միայն ծանրութեամբ գլուխը շարժեց։ Շատ մեծ յանդգնութիւն էր այդպիսի պատուական շորերով երևալը։ Նա վճռեց միայն հագնելու կիսամաշ մաշկները և Ռօբէնին էլ հագցնելու նորանը. բայց այս էլ շռայլութիւն էր Էնգել-Կօրտի մանուկների համար և կարող էր ուշադրութիւնը իւր կողմ դրաւել, որից խիստ շատ էր վախենում փոքրիկ Մէգը։ Հագցնելով մանուկներին և նստացնելով նոցա մահճակալի վերայ, նա, կարելուն չափ, ուղղեց իւր կոշտ մազերը մանուկի ծածկի միջի փոքրիկ հայելու առաջ, յետոյ գլխարկը ծածկեց որ առաջ պատկանում էր նորա մօրը և որը տարիների ընթացքում սև գոյնը փոխել էր շէկի ու սև մանտիլը, որ շատ անօսր էր ու չորս բոլորը պատռտած։ Բայց Մէգը ուշադրութիւն չդարձրեց այս բանի վերայ. նորա սիրտը յուսով լիքն էր. ոչինչ բան այս առաւօտ չկարողացաւ խլել նորա, առհասարակ այսպիսի ծանրախոհ դէմքի ժպիտը։ Վերցնելով մանկան իւր ձեռքին՝ նա իւր սենեկի դուռը կողպէքով փակեց, որի բանալին դրաւ

վզից կախուած պարկի մէջ և սկսեց զգուշութեամբ ներքև իջնել սանդղակի վերայից։ Նոքա գողունի անցան բակն ու նեղ փողոցը, և Մէգը անդադար սաստում էր Ռոբէնին, որ զուարճանում էր նորանով, թէ նորա ոտները մաշիկ են հագցրած և թէ այժմ նոքա կարող են ձայն հանել։ Բայց Էնգէլ-Կօրտի բնակիչները վաղ չեն զարթնում, և մանուկները յաջողութեամբ մտան մեծ փողոցը, ոչինչ ուշադրութիւն չդրաւելով դէպի իրանց և ոչինչ հետաքրքրութեան չենթարկուելով։ Նախ քան նաւահանգիստ գնալը Մէգը մանուկների հետ մտաւ ճանապարհին առաջին անգամ պատահած դատարկ սենեակները, և Ռոբէնին ու աղջկան հագցրեց նոցա նոր հագուստները, որոնց պահած ունէր կապոցի մէջ. յետոյ մի քանի լոպէ լուռ կերպով զմայլած էր նոցանով։ Արդարև, ամբողջ Լօնդօնում չէր կարելի գտնել այնպիսի մի լաւ մանուկ, որպիսին էր Ռոբէնը—իւր փայլուն սև աչքերով ու գանգուր մազերով, որոնք այնպէս լաւ ողողում էին նորա մատների վերայ։ Իսկ ինչ վերաբերում է մանկան, նորա ծանր, մեծատես դէմքն ու քաղցր ժպիտը, որ խօսելուց աւելի շատ բան էր արտայայտում, Մէգը միայն համբուրում էր միշտ նորան։ Հայրիկը որքան ուրախ կլինի, ինչպէս նա կը պանծայ նոցանով։ Բայց նա այստեղ յիշեց, որ անպատճառ պիտի ստիպուի յայտնելու մօր մահը, նորա թաղումը և թէ նոքա այլ ևս չեն տեսնի նորան։ Մէգի աչքերը արտասուքով լցուեցան, և նա դէմքը ծածկելով աղջկայ վզի մէջ, դառնապէս լաց եղաւ, ինքն էլ չիմանալով—ուրախութիւնից թէ վշտից։ Վերջապէս, Ռոբէնը երկիւղից հեկեկալով ստիպեց նորան խելքի գալ։ Նորա ձայնը տարածւում էր սենեկի պատերից դուրս։

Փոքրիկ Մէգը իսկոյն բարձրացաւ, բռնեց նորա ձեռքը, իսկ մանուկն էլ ձեռքին վերցնելով՝ գնաց դէպի նաւահանգիստը։ Նա այնքան յետ ու առաջ գնաց նորա մուտքի մօտ, մինչև որ մօտեցաւ նորան մի մարդ, խիստ, բայց բարի դէմքով։

Մէգը համարձակ դարձաւ նորան, ուղղակի նայելով նորա կարմիր կերպարանքին։

—Բարեհաճեցէք ասել տէր, ասաց նա, թէ շուտ կգայ հօրս նաւը։

—Հօրդ նաւը՞—բարեհոգութեամբ կրկնեց անծանօթը—ի՞նչպէս է անուանում նորա նաւը։

—«Ովկիանոսի թագաւոր», դողալով պատասխանեց Մէգը։

—Նա արդէն ճանապարհին է նաւահանգստին մօտ, մանուկ, ասաց անծանօթը, բայց հաղիւ մինչև գիշերը մօտենայ նորան։ Հայրդ վաղը տանը կլինի, առաւօտը շատ վաղ։

—Շատ շնորհակալ եմ, տէր, պատասխանեց Մէգը ուրախութիւնից դողդոջուն ձայնով։ Վերջապէս, նորա խնդիրը վերջացաւ։ Վաղը նա կտայ անդուկի բանալին իւր գաղտնի գանձով, որի մասին մտածել անգամ զարհուրելի էր թւում նորան, և նորից առաջուայ պէս երեխայ կլինի։ Աղջիկը համարեա նոյնքան ուրախ էր զգում իւրեան, որքան և Ռոբէնը, որ հպարտանում էր իւր մաշիկներով և նորա հետ կայտառութեամբ վազելով՝ խօսում էր ինքն իրան։ Զէ՞

որ այսօր նորա ծննդեան տօնն էր—ահա՛ այս միտքը երջանկացնում էր մանկան։ Ծննդեան օրն էր։ Այդպիսի տօն ոչ ոք չունէր գոնէ ինչպէս ինքը գիտէր բացի Ռօբէնից, և ուրեմն ոչ ոք էլ չունէր Էնգէլ Կօրտում իւր ծանօթներից, մինչև անգամ Մէգն էլ, նա արդէն տասն տարեկան էր և վաղուց արդէն մոռացել էր թէ երբ է գալիս իւր ծննդեան օրը։ Նա լաւ չէր հասկանում, թէ այդ ի՞նչ բան է, որովհետև չէր տեսել կամ շոշափել այդ, բայց այնու ամենայնիւ գիտէր, որ արդարև ինքը ծնուած է։ Մէգը ասել էր նորան այդ, և իւր նոր արժանաւորութեան ճանաչողութիւնը ստիպեց նորան ուրախանալ և հպարտանալ։ Օրը տաք և արևային էր, ընայելով, որ աշունք էր. հեռաւոր գետից թեթև քամին նորոգում էր օդը, նորան անբնական հաճելի դարձնելով։ Մէգը չուզելով նեղ ու ցեխոտ փողոցներով անցնել, ճանապարհ ընկաւ լայն փողոցներով։

—Ռօբբի, ասաց նա, երբ նոքա երեքը միասին նստեցան հանգստանալու մի մեծ տան սանդղքի մօտ. —Ռօբբի, մենք այսօրուան օրս տօնում ենք, որովհետև դու սոյն օրն ես ծնուած, և մինչև երեկոյ տուն չենք վերադառնալ. ես քեզ Տէմպլի այգին կտանեմ։

—Ի՞նչ բան է Տէմպլի այգին, հարցրեց Ռօբէնը, հետաքրքրութեամբ նորա երեսին նայելով։

—Ա՛յ իսկոյն կտեսնես, պատասխանեց Մէգը, չը կարողանալով լաւ բացատրել նորան։ Ես միանգամ եմ եղել այնտեղ, շատ առաջ, դեռ փոքր միջոցիս։ Դու անպատճառ կհաւանես նորան։

—Յետոյ ճանապարհը կարող ենք գտնել, երկմիտ կերպով հարցրեց Ռօբէնը։

—Ի՛հարկէ, պատասխանեց Մէգը. իսկ եթէ չը գտնենք էլ, ոստիկանապետի ծառայողները ցոյց կտան։ Ինչու համար են ուրեմն նոքա կանգնած, եթէ ոչ ինձպիսիներին ցոյց տալու Տէմպլի այգին։ Ո՛հ, ի՜նչ փառաւոր կերպով կանցկացնենք այսօրս։

Մանուկները առաջ գնացին և վերջապէս հասան Լօնդօնի գլխաւոր փողոցներին իւրեանց պատուական, մեծ մեծ խանութներով և միտաշարժ հետևակներով ու կառքերով, որոնք գործում են այստեղ առաւօտից մինչև կէս գիշեր։ Խեղճ՝ փոքրիկ Մէգը մի քանի րոպէ կանգնած էր ուշաթափ ու վախեցած իւր համարձակ ընթացքից, բայց Ռօբէնը անհամբերութեամբ ձգում էր նորա փեշը։ Մինչև մօր հիւանդանալը, որը համարեա գերի դարձրեց նոցա առանձնացած վերնայարկում, նա մի անգամ միայն գնացել էր մինչև Մանչեսթր—Հաուզ, իսկ Մէգը մի քանի անգամ էր եղել մինչև նոյն իսկ Ս. Պօղոսի մայր եկեղեցին։ Երբ առաջին անգամ երկիւղ տիրեց նորան, նա աղմկած ու սարսռալի բաւականութեամբ սկսաւ զմայլել խանութներով ու զբօսնող մարդոց խմբերով։ Նա կանգնեց պատուհաններից մէկի մօտ, տեսնելով մի ահագին հայելու մէջ իւր, Ռօբէնի և մանկան ամբողջ ձևակերպութիւնը, որ շատ մեծ էր սնդուկի ծածկի միջև կտորից։ Աղջիկը ակամայ ախ քաշեց իւր կարմիր հանդերձն ու լաւ գլխարկը չհագնելու համար, բայց իսկոյն ինքն իրան մխիթարեց նորա-

նով, որ իրան, անկասկած, Ռօբէնի ու մանկան դա-
յեկի տեղ կնդունեն։

Նոքա կամաց կամաց սկսան առաջ գնալ, կանգ-
նելով իւրաքանչիւր խանութի առաջ, մանաւանդ, ո-
րոց պատուհաններում կախ էին արած մանուկների
զգեստներ, կամ դրուած էին մեղրամոմ տիկիններ
երեխայի մեծութեամբ, վերջին մօդայով հագնուած,
աչքերի տեղ կեղծ մարգարիտներ ամրացած, որոնք
մի փոքր նման էին Ռօբէնի սև աչքերին։ Բայց ա-
մենից դժուար ու վտանգաւոր էր նոցա համար
Խաչափողցը։ Մէգը սկզբում փոխադրեց մանկան
փողոցի միւս կողմը, և կանգնացրեց նորան մի դուռ
ետև անկիւնում. յետոյ ահուդողով, որպէս զի ոչ ոք
չթռցնի նորան և չփախցնի իրը մի ահագին գանձ,
Ռօբէնի հետ առաջ վազեց։ Այսպէս կրկնուեցաւ
մի քանի անգամ, մինչև որ հասան Լիւդգէա—Գիլ-
լին։ Բայց Մէգը երկար կանգնեց այնտեղ, դողալով և
չհամարձակուելով խօսել բարձրահասակ պօլիսմէնի
հետ, որ վսեմաբար նայում էր չորս կողմ խռնուող
ամբոխին։

—Եղէք բարի Պ. ոստիկան, ասաց նա վերջապէս
աղերսողամ ձայնով, ես երկու փոքրիկ մանուկներիս պի-
տի այն կողմ փոխադրեմ, բայց չգիտեմ թէ ինչպէս
անեմ . . . եղէք բարի, պահեցէք մանկանս, մինչև
որ ես Ռօբէնի հետ կանցնեմ այն կողմ։

Պօլիսմէնը նայեց իւր բարձրութիւնից առանց
թեքուելու նորա հետ խօսող մանուկ էակին. Մէգի
սիրտը ճաքուեց, նա վախեցաւ, թէ մի՛ գուցէ ար-
տաքսի իրան։ Սակայն այդպէս չեղաւ, Պօլիսմէնը բրու-

նեց Ռօբէնի ձեռքից և պատուիրեց աղջկան գնալ,
ողբան կարելի է իւրեանց մօտիկ, և անցկացրեց նոցա
բաղմաթիւ կառքերի միջից։ Վերջին վտանգն էլ ան-
ցաւ այժմ և Մէգը ուրախացած առաջ գնաց իւր մա-
նուկներով։ Ֆլիտ-Ստրիտ աղմկած փողոցից շուտ եկան
նոքա ցածր կամարի տակ և մի րոպէից յետ բաժա-
նուեցան աղմկած տեղից, ուր կառքերի գորգռոցը
խլացրեց նոցա ձայները։ Մանուկները զգացին իրանց
հանգարտ ու խաղաղ տեղ, ուր նոյն իսկ օդը թուում
էր թէ, հանդիսաբար դէպի լռութիւն էր հրաւի-
րում։ Ռօբէնը պինդ կպաւ Մէգին այն ջերմեռանդ
երկիւղի զգացմունքից, որպիսին կզգար նա եկեղեցի
մտնելիս։ Այն տեղ տներ էլ կային, բակեր էլ, բայց
բոլորովին տարբեր խոկոյն թողած փողոցների տներից
ու բակերից։ Տեղ, տեղ պատահում էին նոցա երկայն
պատշգամբներ, արեգակով լուսաւորուած, նոցա շուրջը
դեռնին ընկնում էին այն սիւների ահագին ստուեր-
ները, որոնք պահում էին առաստաղը։ Մանուկները
զարմանում էին ու չէին հասկանում, թէ ուր կարող
էին տանել այս պատշգամբները, և չէին էլ համար-
ձակում որոնել նորա ելքը։ Այդ տեղը դատարկ չէր
կարելի անուանել, սակայն անցորդներ համեմատաբար
քիչ էին, և երկու խեղճ մանուկներին, որոնք բազմու-
թեամբ լիքը քաղաքիս արևելեան ծայրից այստեղ
եկան, այս մասը անապատ էր թուում։ Նոքա միայն
իւրեանց ձայնն էին լսում, որ այնպէս թունդ տա-
բածուում էր, որ Մէգը անդադար գրկում էր Ռօբէնին,
վախենալով, որ չլինի՞ թէ մօտիկ անցնող վսեմ, խիստ
ու ծանրախոհ ջենտլմէններից մէկը չարտաքսի իրանց՝

Տէմպլի սովորական խաղաղութիւնը խանգարելու համար։ Տները նոցա այնպէս բարձր ու ընդարձակ էին թւում, որ Մէգը մի անգամ լսած լինելով մի թագուհու մասին և մութը ներկայացնելով նորան որպէս մի անսովոր երևելի ու նշանաւոր տիկին, գաղտնի հաղորդեց Ռոբէնին, թէ իւր կարծիքով, հենց այստեղ բնակուելիս կ'լինի նա։

Նոքա մօտեցան շատրուանին, որ գանւում էր փոքրիկ կուրտինի մէջ տեղը, բարձր վանդակով շրջապատուած։ Ռոբէնը հիացումից բարձր աղաղակեց և նորա ճչոցը աղմկով տարածուեց խաղաղ տարածութեան մէջ, ուր շադրուանի ջուրը ցայտում էր ու կայծեր արձակում արևի ճառագայթների մէջ։ Բայց ահա նոքա սարսռով զարկուող սրտով հետախուզեցին մի նոր—բացուող կողմ, մօտեցան այդուն—նոյն իսկ Տէմպլի այդուն։ Ոսկէծաղիկը, որ ճոխութեամբ տարածուել էր փայլուն ու պերճ գոյներով, սփռել էր ամէն կողմ իւր գեղեցիկ պաղիկները, որոնք փայլում էին երեկոյեան ջերմ արևի ճառագայթների պայծառ հոսանքներից։ Ռոբէնն ու Մէգը կանգնած էին լուռ ու անշարժ. հիացումն ու բաղդաւորութիւնը չէին թողնում նոցա ձայն հանելու։

—Ո՜հ, Մէգ, ի՞նչ է, այս ի՞նչ բան է, աղաղակեց վերջապէս տղան, ձեռքերը մեկնած կամենալով ամբողջ ծաղիկները իւր գիրկը լցնել. սոքա՞ են այդիները, սոքա՞ են Տէմպլի այդիները։

Ակզում Մէգը չկարողացաւ պատասխանել և միայն բռնեց Ռոբէնին, որպէս զի չմոռանայ ծաղիկներին։ Նա կարծես ուշքի չէր այս անծանօթ, հրճուելի ու արևի ճառագայթներով լեցը տեղը և նախքան կվճռէր ներս գնալ, զգուշութեամբ ներս նայեց վանդակի կիսաբաց դռնից։ Այնտեղ զբօսնում էին բազմաթիւ մանուկներ դայեակների հետ. բայց աղջիկը հասկացաւ, որ իւր ու այն մանուկների մէջ մի տեսակ զանազանութիւն կար։ Հիացումը աւելացրեց Ռոբէնի վստահութիւնն ու նա գոռալով ներս վազելով այդին՝ սկսեց ջոփ ձգել հարթ ճանապարհների վերայ. Մէգը ստիպուեցաւ հետևել նորան։ Տեսնելով, որ ո՛չ ոք չի հոգում նորան կանգնեցնելու և ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում իւրեանց վերայ, նա ինքն էլ անձնատուր եղաւ բոպէական բաւականութեան, ընայելով իւր փոքրիկ բեռան, որ մի փոքր դանդաղացնում էր նորա շարժողութիւնը, աղջիկը սկսեց այն կողմն երթալ, ուր Ռոբէնը կ'կամենար գնալ, մինչև, վերջապէս, նա համաձայնեց նստել աթոռի վերայ գետի հանդէպ, որի վերայով գնում գալիս էին նաւերը։ Սա ամենաբաղդաւոր բոպէն էր Մէգի համար։ Նա մոռացում էր հօր նաւի մասին, որով տուն պիտի վերադառնար, այլ և նորա մասին, որ շուտով հայրը կգայ իւր ու մանուկների մօտ և համարեա՝ մոռացաւ, թէ ո՛ւր էր ինքը։ Ցանկարծ Ռոբէնը, որ մինչև այդ ժամանակ հանգիստ նստած էր, ձգեց նորա փեշը։

—Նայիր, Մէգ, շշնջաց նա, ցոյց տալով մօտակայ նստարանը։ Նորա վերայ նստած էր մի տիկին փայլուն մետաքսէ շորերով ու մեծ գրիչ ունեցող թաւշեայ գլխարկով։ Նորա հետ նստած էին և երկու մանուկներ, մինը աղջիկ Մէգի պէս և միւսն էլ տղայ

համարեա Ռոբէնի հասակով, հագնուած շոտլանդական նեղ գոյնզգոյն շրջազգեստ, ոսկեթելով կարած գրպաններով. ձեռքին բռնած ունէր փոքրիկ թուր, որը դէս ու դէն էր շողացնում իւր մօր առաջ: Մայրն էլ սիրով ու հպարտութեամբ նայում էր իւր փոքրիկ որդուն և ժպտում էր նորան: Մէգն էլ նայում էր այս ուրախ խմբին, երբ յանկարծ լսեց Ռոբէնի հեծկլտալը: Իսկոյն յետ դառնալով նորա կողմ, նա տեսաւ, որ մանկան դէմքը լցուած էր արտասուքներով:

—Ինձ ո՛չ ոք չի ժպտում, Մէգ, ասաց նա:

—Ո՛չ, Ռոբբիս, ես ժպտում եմ քեզ, աղաղակեց Մէգը, հայրիկն էլ կժպտայ քեզ երբ կդայ վաղը.... գուցէ Աստուած էլ ժպտում է մեզ, միայն մենք նորան չենք տեսնում:

—Աւելի լաւ է տուն գնանք, արտասուելով թախանձեց Ռոբէնը:

Մէգը, նորից վերցնելով մանկան իւր յոգնած ձեռներով, յետ դարձաւ դէպի Լօնդօնի արևելեան ծայրը: Տէմպլի այգիներից դուրս գալով, շատ մանգալուց յոգնած, տեսաւ այն բարի մարդուն, որը քաղցրութեամբ պատասխան տուեց իւր՝ նաւահանգստում արած հարցերին. նա գնում էր դատարկ սայլակում նստած և նկատելով, որ աղջիկը անդադար իրան էր նայում, կանգնացրեց ձին:

—Էյ, մանուկ, գոչեց նա. ձանապարհներս մէկ չէ՞:

Նա խարազանով ցոյց տուեց Սուրբ Պօղոսի եկեղեցու կողմը: Մէգը գլխով արեց—նորա ձայնը աղմկից չէր լսւում:

—Այ մարդ, մանուկներին այստեղ բեր և նստացրու մօտս, ասաց նա ձանապարհին կանգնած պարապ մարդկերանցից մէկին:

Միքանի րոպէից յետոյ մեր փոքրիկ ծանօթները փառաւոր կերպով անցնում էին Ֆլիտ-Սարիտ փողոցի վերայից: Մէգը երբէք դեռ այսպէս չէր հիացել: Ռոբէնը մոռացաւ իւր բոլոր ցաւերն ու ուրախ ուրախ քշում էր ձին, իւր բոլոր ուժով գոռալով նորան: Էնգէլ-Կօրտից կէս միջնաչափ հեռու մանուկները ցած իջան սայլակից: Դեռ բոլորովին լոյս էր: Ռոբէնը էլ յոգնած չէր: Մէգը մանրեց իւր վերջին կիսակրօնները (*) և վեց պէնսի մեկ կարկանդակ գնեց—այլ ևս ինչ հարկաւոր է ժլատութիւն անել, չէ՞ որ վաղը հայրիկը պիտի դար: Եւ ինչ փառաւոր կերպով ճաշեցին նոքա, նստելով մի տան դռների մօտ:

ԳԼՈՒԽ V

Փոքրիկ Մէգի հարևանը:

Վայելելով իւրեանց փոքրիկ ճաշը, մանուկները կամաց կամաց գնացին տուն. նոքա չկամեցան մինչև մթնելը գնալ Էնգէլ-Կօրտ, որ ոչ ոք չնկատի Ռոբէնի ու մանկան շորերը. երբ արդէն մթնեց, նոքա մտան իւրեանց ծանօթ նեղ ցեխոտ փողոցները: Մտնելով իւրեանց տուն, Մէգը լսեց Միստէր Գրեգգի խրոխտ ձայնը, որ կանչում էր իրան: Նա դողալով ու մանուկներին պինդ սղմելով իրան, գնաց նորա սե-

(*) Կրօնան ռուբլիանոց դրամ է:

նեակը։ Այս սենեակը նոյնքան փոքր էր, որքան և նոցա վերնայարկի սենեակը. շփոթմունքից ու երկիւղից աղջիկը երկու քայլից աւելի չկարողացաւ գնել շէմքից։ Միսսէր Գրիգորը նստած էր կաղնէ ներկած սեղանի առաջ, որի վերայ դրած էին երկու մեծ բաժակ և մի սև շիշով օղի. Միսսէր Գրիգորի դողդոջուն մեծ ձեռքի մօտ դրած էր մի նամակ։ Օղիի և ծխախոտի հոտը երեկոյեան թարմ օդից յետոյ, Մէգին ստիպեց հաղել, բայց նա շատ ցածր էր հաղում, որպէս զի տանտիրոջ բարկութիւնը չշարժի։

—Մէգ, մօրդ վերայ նամակ կայ, ասաց նա, շտապով վերցնելով ծրարը. թէ ուզում ես, ես ինքս կկարդամ քեզ համար։

—Օ՛հ, չէ, շնորհակալ եմ, տէր, իսկոյն պատասխանեց աղջիկը. հայրս վաղը կվերադառնայ և ինքը կկարդայ։ Նոցա նաւը այժմ արդէն ճանապարհին է և այս գիշեր անպատճառ նաւահանգստում կլինի։

Այս լսելով Միսսէր Գրիգորը լաւ համարեց նամակը իրան տալ, բայց այնպէս անհաստատ կերպով էր նորա այս վճիռը, որ Մէգը շտապեց շուտ դուրս գնալու, որպէս զի նա յետ չառնէ նամակը։ Այդ միջոցին Ռօբէնը դեռ սանդղանների կիսին էր, բայց Մէգը շուտ հասաւ նորան և մի լոպէից յետոյ երկուսով հասան իւրեանց տնակի դռներին։ Մէգը, հենց էն է, պատրաստւում էր մանկան ձեռքը թողնել և բանալին վերցնել, երբ զարմանալով տեսաւ, որ բանալին արդէն կողպէքումն է և դռան ճեղքից ճրագի լոյս էր երևում։ Աղջիկը չհաւատաց իւր աչքերին. նախ քան ներս կմտնէր նա բարձրացրեց դռան

փակը և ահուդողով սկսեց ներս նայել։ Այնտեղ— ներսը ամէն բան առաջուայ դրութեան մէջ էր, միայն նորա հանգուցեալ մօր մի ցածր աթոռի վերայ, վառարանի մօտ, գլուխը ձեռների վերայ յենցած նստած էր մի տգեղ կին, որ աւելի մեռածի նման էր։ Մէգը զարմանքից ձայն չկարողացաւ հանել և կանգնեց շէմքի մօտ. իսկ Ռօբէնը իսկոյն վազեց անծանօթի մօտ և ուրախ ուրախ աղաղակեց «մայրիկ, մայրիկ»։

Այս բացագանչութիւնը ստիպեց նորան գլուխը բարձրացնելու։

Նորա դէմքն էլ դժգոյն ու նիհար էր, բայց նոցա մօր դէմքից ջահիլ. ներս ընկած կարմրագոյն աչքերից իմացւում էր, որ նա շատ էր լաց եղել, իսկ նորա տխուր արտայայտութիւնը ստիպեց նոցա մոտենալու, որ բաղտաւոր ժպիտը երբէք չի ցոլացել այս խեղճ կնոջ դէմքին։ Մէգը իսկոյն իմացաւ, որ նա իւր հարևանն էր, որը վեց շաբաթ բանտն էր նստած, և շփոթուած նայում էր մահճակալի տակի մութ անկեան, ուր դրուած էր սնդուկը։ Նա ըստ երևութին ամբողջ էր ու անվնաս. սակայն խօսելիս Մէգի ձայնը կերկերում էր։

—Ես կարծեցի, թէ դուռը պինդ է փակած, ասաց աղջիկը ներս մտնելով։

Ռօբէնը թաքկացաւ քրոջ ետևը և այնտեղից ուշադրութեամբ նայում էր անծանօթ հիւրին։

—Հենց այդպէս էլ էր, պատասխանեց վերջինը. բայց [illegible] է, իմ բանալին վրայ է գալիս ձեր կո[illegible]ին։ [illegible] յոսր ես խիստ մրսում էի, երբ բանտից վերադարձայ, ոչ ածուխ ունէի, ոչ հայ, ոչ-

ինչ ու այստեղ եկայ տաքանալու։ Ինձ մի նախատիր, Մէգ, դու էլ նոյնը կանէիր, եթէ վեց շաբաթ փակուած մնայիր։ Ո՛հ, ես որքան էի ցանկանում մեռնել։

Աղջիկը տխուր էր խօսում և նորից գլուխը կախ գցեց ձեռքի վերայ։ Մէգը կանգնած էր սենեկի մէջ աչքը, չիմանալով թէ ի՞նչ անէ ու ի՞նչ խօսէ։ Վերջապէս, նա նստեց անկողնի վերայ և սկսեց մերկացնել մանկան, մատածելով իւր անելիքի մասին։ Այժմ՝ի հարկէ կարող էր նա պահպանել իւր արկղը, բայց եթէ այն կնոջ սենեկի բանալին վրայ է գալի իւր դռան կողպէքին, էլ ի՞նչպէս միւս բոլոր մնացած օրերին տանից դուրս ոտք դնէր։ Այնուհետև էլ մի բոպէ հանգիստ չէր կարող լինել։ Բայց նորան մխիթարում էր այն միտքը, որ վաղը պիտի գար նորա հայրը, և նորա հոգսերը թաղցրած դանձի մասին կ՝վերջանային։ Այդ միջոցին Ռօբէնը թաղուն մտացաւ անծանօթին և ուշադրութեամբ նայելով նորան մի քանի բոպէ, իւր փոքրիկ մատները կպցրեց նորա ձեռքին։

—Ես կարծեցի թէ դուք մայրիկս էք, իրաւ, ասաց նա։ Գիտէք այսօր Ծննդեան տօնս է։

Աղջիկը նայեց նորան և բոպէական ժպիտը փայլեց նորա խորունկ աչքերում։ Նա վերցրեց մանկան, նստացրեց իւր ծնկան վերայ և դէմքը կպցնելով նորա դանդրահեր գլխին՝ դառնութեամբ լաց եղաւ։

—Մէգ, ասաց նա, մայրդ մի անգամ սիրով խօսում էր հետս, իսկ այժմ նա այլ ևս աշխարհումն

չէ, ինչո՞ւ այժմ ես չլինեմ այստեղ նորա փոխանակ։

Մէգի քնքոյշ սիրտը այլ ևս չհամբերեց։ Նուա մոտենալով աղջկան, նա մանկանն էլ նորա ծնկան վերայ նստացրեց։

—Առանց թոյլտուութեան չպէտք էր օտարի սենեակը մտնել, ասաց նա, բայց եթէ դուք այս փոքրիկիս կբռնէք, ես իսկոյն թէյ կպատրաստեմ։ Ես դեռ քիչ էլի ունիմ, բայց վաղը հայրս կառնի։ Մինչև դու պահիր մանուկներին։

Թէյը շուտ պատրաստուեց և նոքա բոլորը միասին խմեցին, շատ քիչ խօսելով միմեանց հետ։ Մէգը շտապում էր յոգնած երեխաներին պառկացնելու, ուստի և իսկոյն թէյը վերջացնելուց յետոյ, մերկացրեց նոցա։ Նախ քան Ռօբէնին պառկացնելը, նա դարձաւ այն աղջկան։

—Ռօբբին միշտ բարձր ձայնով է աղօթում քնելիս, ասաց նա, ձեզ հօ չի խանգարի այս։

—Ինձ վերայ ուշադրութիւն մի դարձրու, պատասխանեց հիւրը լաց լինելով։

—Ռօբբի, ասաց Մէգը երբ տղան նորա առաջ ծունկ չոքեց և ձեռները ծալեց, Ռօբբի, այսօր քո Ծննդեան տօնն է, և ես որ քո տեղը լինէի, այսօր մի բան աւելի կինդրէի Աստծուց, քան թէ ինչ որ ամէն օր խնդրում ես։ Ես նորանից կինդրէի օրհնել ամէնին, մեզ էլ նոցա հետ։ Ինչ փառաւոր բան կլինէր, որ ամէնքը լաւ լինէին։

—Այո՛, այո՛, Մէգ, իսկոյն պատասխանեց Ռօբէնը, աղօթելուց առաջ փակելով իւր սեւուկ աչերը. «Ծէր Աստուած, սկսեց նա, ողորմիր հօրս, հեռու, ծովի

այն կողմ, ողորմիր ինձ էլ Մէգին էլ, փոքրիկ քրօջս էլ, և պահպանիր մեզ բոլորիս։ Տէր Աստուած, ողորմիր ամենքին, բացի սատանաներից, ամէն։ Մանուկը լռեց, բայց չվերկացաւ, այլ գլուխը դնելով Մէգի ծնկան վերայ՝ ասաց նորան, երբ արդէն նա կամենում էր հեռանալ մի բոպէ էլ սպասիր։» Մէգը համբերութեամբ սպասում էր։ Տղան, գլուխը նորից բարձրացրեց, աչքերը լաւ տրորեց ու աւելացրեց. «Տէր Աստուած, ողորմիր ամենքին ու սատանային էլ և նորան դարձրու բարի, ամէն»։

—Ոօբբի, տխրութեամբ ասաց Մէգը, չեմ կարծում, թէ սատանան կարողանայ բարի լինել. նա այս չի կամենում։ Աստուած կարող է ամենավատ մարդուն անգամ լաւացնել, եթէ միայն ինքը մարդը կցանկայ այս. բայց եթէ նա չի կամենում այս, Աստուած էլ նորան չի օգնի։

Բայց տղան կարծես արդէն քնել էր և ուշադրութիւն չդարձրեց Մէգի խօսքերին։ Պառկայնելով նորան մանկան մօտ և տաք ծածկելով, աղջիկը խոնարհեց դէպի մանուկները և քնքշութեամբ կամաց համբուրեց նոցա դէմքերը։ Յետոյ դառնալով դէպի վառարանը, նա տեսաւ, որ իւր հիւրը ծունկ է չոքել գլուխը աթոռի վերայ դրած և հոգեքաղ կերպով հեծկլտում էր։

ԳԼՈՒԽ IV

Փոքրիկ Մէգը ծախսում է և իւր վերջին դրամը։

—Ի՞նչ է պատահել ձեզ, հարցրեց Մէգը, իւր փոքրիկ ու կոշտ ձեռքը դնելով աղջկայ գլխին։

—Ո՜հ, Մէգ, Մէգ, գոչեց նա, ես չեմ կամենում և չեմ էլ կարող լաւանալ։ Դու չգիտես, թէ որքան ես վատ եմ, այն ինչ մի անգամ ես էլ նոյնպիսի լաւ աղջիկ էի, ինչպէս և դու. այժմ.. երբէք առաջուայ պէս էլ չեմ կարող դառնալ։

—Կարող է՞ք, պատասխանեց փոքրիկ Մէգը, եթէ Աստծուց օգնութիւն կխնդրէք։

—Դու բան չգիտես այստեղ, ասաց աղջիկը, ձեռքը յետ մղելով։

—Ես շատ բան չգիտեմ, վախով ասաց Մէգը, բայց Յիսուս Քրիստոսն ասում է սուրբ գրքում, որ եթէ մեր ծնողները տալիս են «բարի պարգևներ» իւրեանց որդւոց, որչափ առաւել կարող է տալ Աստուած իւրան հայցողներին։

—Բայց ես խիստ վատ եմ և անարժան նորանից բան խնդրելու, պատասխանեց աղջիկը։

—Ուրեմն էլ ո՞վ կօգնի քեզ, ասաց Մէգը։ Աստուածաշնչում ասած է «Նորան խնդրողներին», իսկ եթէ դուք խիստ վատ էք, և անարժան նորանից բան խնդրելու, այդ դէպքում նա էլ ոչինչ լաւ բան չի տալ։

Աղջիկը չպատասխանեց։ Գլուխը կախելով Մէգի

ոտների մոտ, նա սկսաւ նայել կրակին, խոր մտածմունքի մէջ ընկղմած։ Մէգն էլ մի քանի րոպէ լռեց, երբեմն երբեմն ժպտելով, երբ յիշում էր, որ վաղը իւր հայրը տանը կլինի։

—Իսկ ի՞նչպէս է ձեր անունը, հարցրեց նա վերջապէս իւր հիւրին։

—Ո՛հ, ես շատ անուն ունիմ, ծանր հառաչելով պատասխանեց աղջիկը.—ինձ Կիտտի էլ են ասում, Կատարինէ էլ ու....

—Բայց դոքա բոլորը ձեր իսկական անունները չե՞ն, շարունակեց Մէգը։

—Ո՛չ պատասխանեց աղջիկը։

—Այրդ ի՞նչ է կանչում քեզ, հարցրեց Մէգը և յանկարծ խղարհուրեց իւր հիւրի յանկարծակի փոխուելուցը։ Սա բռնեց նորա ձեռքը և այնքան պինդ հուպ տուեց, որ ցաւացրեց. նորա աչքերը փայլեցին բարկութեամբ։ Սակայն նա մի րոպէից յետ սկսեց փոքր առ փոքր թոյլ թողնել ձեռքը և կերկեռուն ձայնով ասաց.

—Երբէք ինձ չմտաբերես մօրս անունը։

—Փող ունիք, խօսքը փոխելու համար հարցրեց Մէգը։

—Ո՛չ մի կոպէկ, կերկեռաձայն ժպտաց Կիտտին։

—Ինձ երկու շիլլինգ էլ է մնացել, շարունակեց Մէգը և ես քեզ կտամ նոցանից մինը. միայն, խընդրեմ, մի՛ մոռնէք երբէք իմ սենեակը, գոնէ քանի որ դեռ հայրս այստեղ չէ։ Ես մօրս խոստացել եմ ոչ ոքի չթողնել այստեղ։ Կարծեմ չէք բարկանայ դուք նձ վերայ, այնպէս չէ՞։

—Չէ, ամենևին, մեղմութեամբ պատասխանեց Կիտտին.—միշտ կատարիր մորդ պատուէրները, Մէգ։ Նա մի անգամ ինձ հետ շատ սիրով խօսեց, միտս է այն։ Դեհ, սիրելիս, ես գնում եմ և այլ ևս երբէք չեմ մտնի այստեղ. դու կարծեմ ինձ թոյլ կտաս գոնէց ականջ դնելու, երբ Ռոբբին կարդալիս կլինի իւր երեկոյեան աղօթքը։

—Ի՛հարկէ, պատասխանեց Մէգը, դուք այն ժամանակ էլ կարող եք ականջ դնել, երբ ես բարձր ձայնով կարդում եմ, եթէ միայն կամենաք։ Ես միշտ քեզ համար քնից առաջ մի փոքր կկարդամ և այնպէս բարձր կկարդամ, որ դուք բոլորը լսէք։

—Ես կ'լսեմ, ասաց Կիտտին, պատրաստուելով գնալու իւր մութ ու ցուրտ անակը և տխրութեամբ նայեց Մէգի մաքուր սենեկի շուրջը, որ պատրաստել էր հօր ընդունելութեան համար։ Կթողնես նախ քան գնալը երեխայոց համբուրելու։

—Օ՛հ, ի՛հարկէ, պատասխանեց Մէգը, նորա հետ մտնելով անկողնին և սիրով նայելով մանուկների քնած դէմքերին։ Մանկիկի փոքրիկ ու դժգոյն դէմքը նոյնպէս ժպտում էր, ինչպէս և Ռոբէնինը. մանուկը երազում տեսնում էր նոյն այգիները որոնցում նա զբօսնում էր իւր ծննդեան օրը։ Աղջիկը թեքուեց դէպ'ի նա, իսկ յանկարծ յետ քաշուեց, չհամբուրելով նոցա։

—Ուրիշ լաւ է, որ մեռնեմ, ասաց նա տանջուելով։

ԳԼՈՒԽ VII

Փոքրիկ Մէգի ուշքի գալը։

Փոքրիկ Մէգը Ռոբէնի ծննդեան օրը առաւօտը վաղ վերկացաւ և նախ քան երեխայոց զարթնելը մին էլ սրբեց ու լուաց իւրեանց սենեակը։ Նա թէ իւր և թէ մանուկների համար լաւ լաւ շորեր հանեց, որովհետև աւելի լաւ համարեց տանը սպասել հօր վերադարձին։ Նորա գլուխը նոյնպէս աշխատում էր իւր ամբողջ գործերի ժամանակ, ինչպէս և ձեռները և հազիւ տասն և մի ժամին վերջացրեց ամենը։ Մնում էր միայն, որ հայրը գար։

Հաւաքուելով պատուհանի մօտ, Մէգը նստացրեց այնտեղ Ռոբէնին և մանկանն էլ ձեռքին վերցրեց։ Սկզբում մանկիկը ստիպուած էր նոցա հետ միասին նստել այն վտանգաւոր գահի վերայ, և դորա համար էլ Մէգը փոքր ինչ վախեցաւ։ Բայց մանուկը այս առաւօտ մի առանձին կերպ թոյլ էր ու տխուր, և հանգիստ նստեց աղջկայ ծնկան վերայ, իւր գլուխը դնելով նորա ուսին։ Նորա անտարբեր աչքերը զարմանքով նայում էին այն անծանօթ աշխարհին, որ նա տեսնում էր պատուհանից։ Մէգն ու Ռոբէնը հեռուում էին դռնից ներս մտնող իւրաքանչիւր մարդուն և Ռոբէնը ծափահարելով անդադար աղաղակում էր «հայրիկն է, հայրիկն է»։ Մէգը դողում էր և նորա սիրտը սպասելուցը աւելի սաստիկ սկսաւ զարկել։ Բայց աղան մօտ մի տարի էր, ինչ որ հօրը չէր տեսել և համարեա բոլորովին մոռացել էր նորան և այդ

երևում էր ամեն անգամ ստուերուցը։ Ժամերն անց էին կենում իրար հետևից. Մէգը բաժանեց իւր և մանուկների մէջ իւրեանց վերջին հացի կտորը, իսկ հայրը չեկաւ։ Սակայն մանուկները չվերկացան տեղից և շարունակ սպասում էին, մինչև մթնելը։ Բայց ահա, վերջապէս, գիշերն էլ վաղ վրայ հասաւ, որովհետև Նոյեմբերի մէկն էր և Լօնդօնի մառախուղն այս միջոցին ամենասաստիկ է լինում։ Մէգը նորից կրակ արեց և լուռ նստեց. նա չէր կամենում մանուկներին մերկացնել մինչև հօր վերադառնալն և նա այնքան սպասեց, մինչև որ մանուկը հիւանդացած քնեց նորա ծնկան վերայ ու Ռոբէնն էլ յատակի վերայ։

Այն ժամանակ, Մէգը պառկացրեց նոցա այնպէս հագնուած, իսկ ինքը գլուխը շալի մէջ փաթաթելով իւր կարմիր հանդերձի վերայից և կօշիկներն ու գուլբէքը հանելով (որովհետև գիշերով հայրը չէր նկատի այս բաները) կամաց, հանդարտ քայլերով գնաց նաւահանգիստը։ Աղմկած դռնից անցնելով, նա դուրս գնաց փողոցը։ Մառախուղը հեղհեղէ մեծանում էր, բայց աղջիկը ճանապարհը լաւ գիտէր։ Սակայն հասնելով նաւահանգստին նա մթան մէջ չկարողացաւ մառախուղի պատճառաւ գտնել իւր յարգելի բարեկամին, եթէ միայն նա այնտեղ էր։ Նա մի տեսակ զարհուրելի աղմուկ էր լսում. երբեմն երբեմն լսում էին կոպիտ ձայներ, և խաւարի մէջ նորան մի մարդու ահագին բոպէական պատկեր երևաց, որ իսկոյն անյայտացաւ, քանի դեռ Մէգը չէր հաւաքել իւր քաջութիւնը և չէր խօսացել հետը։ Քաշուելով մի անկիւն, նա սկսեց ուշադրութեամբ նա-

յել անթափանցելի դեղին մառախուղին և ականջ էր դնում շղթաների շրխշրխկոցին և նաև երում աշխատող աներևոյթ նաւաստիների խօսակցութեան: Եթէ նա լսէր իւր հօր ձայնը, արդէն ուրիշ հարիւրաւորների միջից կճանաչէր նորան և իսկոյն կաղաղակէր «Հայրիկն է»: Նա նոյն իսկ բոպէին կյայտնուէր նորա մօտ, կգրկէր նորան, իսկ աղջիկն էլ պինդ կգրկէր նորա պարանոցը: Ո՛հ, որքան էր կամենում, որ խօսէր նորա հետ, իսկ շուրջը մութն էր ու խիտ: Աղջկայ աչքերը արտասուքով լցուեցան, նա յոգնեց ականջ դնելուց ու նայելուց. բայց արտասուքը սրբելով շալի ծայրերով և առաջ ընկած մազերը տանելով իւր գեղեցիկ ականջների եռևը, միանգամ էլ առաջ թեքուեց, երկու ձեռքով աշխատելով բռնել թրթռող սիրտը և վերջին ճիգը թափելով մթնումը մի բան որոշելու:

Այդ իսկ բոպէին նորա դլխում մի միտք ծագեց, թէ, կարելի է, հայրը հինայ բաղխում է իւրեանց սենեկի դուռը, իսկ մանուկները զարթնել են ու երկիւղից լալիս են, որովհետև ոչ ոք չկար իրանց մօտ: Նա իսկոյն կամենում էր դէպի առն վազել, երբ յանկարծ տեսաւ իւր մօտ մի մարդ. աղմուկը նորան սիրտ տուեց և նա կանգնեցրեց նորան, ողորմաձայն ասելով.

—Ասացէք խնդրեմ, տէր, եկա՞ «ովկիանոսի թագաւորը»:

Այո՛, պատասխանեցին նորան, երեկ երեկոյին եկաւ, ամբողջ և անվնաս:

«Ուրեմն, պէտք է որ հայրս տանը լինի» մտածեց Մէգը և շտապեց յետ դէպի Ինդէլ-Կօրա: Վերև նայելով պատուհաններին՝ նա տեսաւ, որ այնտեղ բոլորովին մութն էր, իսկ ներքին յարկում աղօտ կերպով փայլում էր կրակը: Տանտիրոջ սենեակը լցուել էր մարդկերանցով, ամենքը խմում էին, կռւում էին, վիճում էին: Մէգի սիրտը կոտրուեց: Նա մտածեց, թէ երևի հայրը վերադառնալով ու դուռը փակ գտնելով, մտել է ներքև և սկսել է խմել միասէր Գրիդդի հիւրերի հետ: Շտապով, առանց աղմուկ բարձրացնելու, նա վերև վազեց, բայց այնտեղ ամեն ինչ հանգիստ էր. նորից ներքև եկաւ, սկսեց ականջ դնել տանտիրոջ դռան մօտ, իմանալու թէ այնտեղ է արդեօք իւր հայրը կամ դոնէ կթողնեն արդեօք իրան այնտեղ ներս մտնելու: Խեղճ Մէգի սիրտը լի-քն էր կանացի ամենաձանր հոգսերով ու երկիւղով: Նայեմբերի այդ խոնաւ ու մութ գիշերը նա այնքան կանգնեց դռան մօտ, մինչև որ շփոթուած խումբը ցրուեց և Ինդէլ-Կօրան նորից իսկոյն խորին լռութեան մէջ ընկաւ:

Մի ուռաւօտ Մէգը ուշ զարթնեց, բայց դռան բաղխումը զարթեցրեց նորան: Զարթնելուց յետոյ առաջին անգամ նորա աչքն ընկաւ Ռօբէնի վերայ, որ վաղ վեր էր կացել և երեկուայ ճխլտուած շորերով նստել էր պատուհանում, բարեբաղդաբար նա պինդ փակած էր: Առաւօտը շատ սառն ու ուշ անցաւ նորա համար, խառն երկիւղի ու յուսոյ հետ. նոյա մօտ ոչ ոք չեկաւ, այդ օրը Կիտային Մէգի զարթնելուց առաջ գնաց: Աղջիկը իւր վերջին շիշլինգը տուեց ածխի ու վարսակի ալիւրին: Դուրսը մանրակաթիլ անձրև էր գալիս և նա իւր մանուկների հետ նստեց

Իրեանց սանդղտի վերայ դռան մօտ շարունակ սպասելով հօրը, մինչդեռ նորա երկիւղը հետզ հետէ աւելանում էր։

Ալդէն սկսել էր մթնել։ Ցանկարծ Մէգը լսեց, որ մէկը բարձրանում է սանդղտներով և գալիս է իրանց մօտ. սակայն դռան մարդու ծանր քայլեր չէին, այլ հազիւ լսող՝ կնոջ ոտնաձայներ, և աղջիկը խոյն իմացաւ, որ եկողը ոչ այլ ոք էր, բայց եթէ Կիտոին։

Մէգը նստած էր երեխայոց հետ կարգով, իսկ Ռօբէնին նստացրեց իւր ծնկան վերայ։

—Ա՛յտեղ ի՞նչ էք շինում, Մէգ, հարցրեց նա այնպիսի մեղմ ու հանդարտ ձայնով, որ զարմացրեց Մէգին, սա իրան չէր հաւատում, թէ նա նոյն Կիտոին էր ասում, որի հարբած ժամանակի ուրախ աղաղակները այնպէս յաճախ վախեցնում էին նորան։

—Մենք հայրիկին ենք սպասում, յոգնած պատասխանեց աղջիկը. նա դեռ չկայ, իսկ ես բոլոր փողը ծախսեցի, և մամ էլ չունենք։

—Մէգ, ասաց Կիտոին, ես կարող եմ քեզ տալ այն շելլինգը, որ դու ինձ տուիր երեքշաբթի երեկոյին։

—Բայց չէ՞ որ միւնոյն է, դուք դարձեալ չէք կարող մեր սենեակը մտնել, պատասխանեց Մէգը։

—Չէ, չէ, չեմ մտնի, ասաց աղջիկը, փողը տալով նորան։ Իսկ ինչո՞ւ հայրդ չեկաւ։

—Չգիտեմ, լաց լինելով պատասխանեց փոքրիկ Մէգը. նորա նաւը սորանից երկու օր առաջ վերադարձաւ, Ռօբբիի ծննդեան գիշերը, իսկ նա դեռ չկայ ու չկայ։

—Նաւը դարձաւ, զարմանալով կրկնեց Կիտոին։ Ի՞նչպէս է նորա անունը, Մէգ։

—Հօրս նաւը կոչւում է «Ովկիանոսի Թագաւոր», հպարտութեամբ պատասխանեց Ռօբէնը։

—Ես կիմանամ թէ ուր է քո հայրը, Մէգ, շտապով ասաց Կիտոին.—ես կորոնեմ նորան։ Ես չէ՞ որ գիտեմ, թէ երբ են նաւորդները վերադառնում և երբ գնում։ Երեխայոց պառկացրու քնելու, սիրելս, իսկ դու սպասիր ինձ մինչև ժամը մէկը։ Ես հօրդ տուն կբերեմ կենդանի կամ մեռած։ Էլ մի լաց լինիր, փոքրիկ Մէգ։

Վերջին բառերը նա արդէն ներքևից էր դուռում, որովհետև իսկոյն հենց աղջկայ ցաւը իմանալու պէս ճանապարհ ընկաւ։ Մէգը հենց այնպէս էլ արեց, ինչպէս պատուիրեց նորան Կիտոին։

Նորա սիրտը նորից յուսով լցուեցաւ։ Պէս գիշեր էր, երբ աղջիկը կամաց բաղխեց դուռը. Մէգը գնաց դէպի սանդուղքը։ Բայց Կիտոին միայնակ էր. Մէգը հազիւ կարողացաւ ոտի վրայ կանգնել։

—Զգուշաք հօրս, հարցրեց նա։

—Ես իմացայ նորա տեղը, պատասխանեց Կիտոին։ Նա աշխարհի միւս կողմն է, հիւանդանոցում։ Երբ նոքա պատրաստուել են դուրս գալու, նա յանկարծ հիւանդացել է և թողել են այնտեղ. երբ կլաւանայ, իսկոյն կվերադառնայ։ Այս բանը ինձ պատմեց Զէկը, նորա ընկերակիցը. նա ասում է, որ հայրդ կարող է գալ և որ շուտ, շատ շուտ կվերադառնայ, իսկ ու-

ըիշ բան յայտնի չէ Նորան։ Այժմ ինչ ես մտածում Մէգ։

—Մայրս ինձ յանձնեց հոգ տանել մանուկների վերայ մինչև հօրս գալը, պատասխանեց նա, աշխատելով պինդ խօսել և ես Աստուծոյ օգնութեամբ կատարում եմ այդ։ Ես աղօթում եմ Նորան, և Նա օգնում է ինձ և Ինքը հոգում է մեզ վերայ։

—Իմ մասին չհոգայ Նա, դառնութեամբ ասաց Կիտտին։

—Երևի դուք դորա մասին չէք խնդրել Նորան, պատասխանեց Մէգը։

Կիտտին մի բոպէ լռեց։

—Այո՛, այո՛, Նա կհոգայ ձեր մասին, ասաց նա հեկեկալուց ընդհատուող ձայնով. մի՛ վախի՛ր, Մէգ։ Ո՜հ, երանի թէ Նա ինձ այնքան շնորհք տար, որ կարողանայի ես էլ նորա հետ ձեզ օգնել։ Ես խիստ յանկանում եմ ձեզ երեքիդ համար մի որևէ բան անել, Մէգ. մայրդ միանգամ քաղցրութեամբ խօսեց հետս, Մէգ, և ինձ յիշեցրեց իմ..... էհ, գնա քեզ համար, ես իսկոյն գնում եմ քնելու և քեզ էլ ժամանակ է արդէն։ Ես քեզ ամէն կերպ կօգնեմ, ինչքան կարող եմ։

Եւ, կամաց ներս հրելով աղջկան նորա սենեկում, Կիտտին փակեց նորա դուռը։ Մէգը երկար ժամանակ լսում էր, քանի դեռ չէր քնել, թէ ինչպէս նա հեկեկում էր իւր սենեկում և հառաչում։

ԳԼՈՒԽ VIII.

Փոքրիկ Մէգը գրաւ է դնում իւր կարմիր հանգերձը։

Միւս առաւօտ Մէգը սրտաբեկ վերկացաւ։ Նա այժմ ճիշտ գիտէր, որ իւր հայրը դեռ բաւական ժամանակ տուն չէր դառնայ և գուցէ դեռ շատ երկար ժամանակ չէր դալ։ Բայց ինչքիվ պիտի Նա կերակրէր մանուկներին։ Ինչով գնէր իւր և նոցա համար հաց. վառարանի մօտից վերցնելով մօր անուամբ ուղարկած նամակը նա մի բոպէ տխրութեամբ նայեց նորա վերայ, չհամարձակելով մէկին խնդրել այն կարդալու. նորանում կարող էր խօսք լինել այն փողերի մասին, որոնք պահւում էին մեղուկում, իսկ այս փողերը նա լաւ պիտի պահէր, որովհետև նոքա ոչ իրան էին պատկանում և ոչ իւր հօրը, այլ նորա ընկերոջ։ Ամբողջ քաղաքում նա մի ազգական չունէր, որին նա կարողանար դիմել իւր նեղ դրութեան ժամանակ։ Առաջ նա դիմում էր իւր ուսուցչին, որը նորան սովորցրեց մի փոքր կարդալ. բայց նա Լօնդօնի բոլորովին ուրիշ կողմն էր բնակւում—դեռի այն կողմը, որտեղից նոքա փոխադրուեցան հօր վերջին անգամ գնալուց առաջ։ Մէգը տխրութեամբ մտածում էր ու էլի մտածում, թէ ինչպէս վարուի, երբ յանկարծ նորա երկիւղը անյայտացաւ և մանկական սիրտը պայծառացաւ. նա ինքն էլ չէր իմանում, թէ ինչպէս եղաւ այս։ Ռօբէնին կանչելով, պատուիրեց նորան իւր մօտ ծունկ չոքել և խաչելով փոքրիկ քրոջ

ձեռքերը՝ աչքերը փակեց, գլուխը կախեց և սկսեց աղօթել, խնդրելով Աստծուց Նորա խոստացած օգնութիւնը։

—Տէր Աստուած, ասաց փոքրիկ Մէգը, Դու կամեցար, որ մայրս մեռնի, իսկ հայրս տկարանայ աշխարհի միւս կողմը. այժմ, բացի Քեզանից, ոչ ոք չկայ մեր մասին հոգացող։ Յիսուս Քրիստոսն ասում է, որ եթէ մենք խնդրենք Քեզանից, Դու կատարես մեզ հաց և ամէն բան՝ ինչ որ մեզ պէտք է, նոյնպէս, ինչպէս և հայրս ու մայրս։ Կատարիր այս, Տէր։ Ես դեռ ևս մեծ չեմ, Ռօբէնը բոլորովին փոքրիկ տղայ է, իսկ քուրիկս ոչ կարողանում է մանգալ, ոչ խօսել և մեր մասին հոգս տանող չկայ. մենք մեր բոլոր ջանքով կաշխատենք լաւ լինել։ Տէր Աստուած, օրհնիր հօրս ծովի այն կողմը, Ռոբբիին էլ, քուրիկիս էլ ու ինձ էլ. օրհնիր ամենքին, Յիսուս Քրիստոսի սիրու համար, ամէն։

Աղջիկը ուրախ ուրախ վերկացաւ տեղից, բոլորովին հաւատացած լինելով, որ իւր աղօթքը լսուեց և առանց պատասխանի չի մնայ։ Նա մանուկների հետ միասին գնաց որևիցէ բան առնելու այն մի շիշլինգով, որը Կիտտին տուել էր Նորան անցեալ երեկոյեան և տուն դառնալով, Ռոբբիի հետ նստեց դասի։ Մանկիկը, որ այդ միջոցին սեղանից սեղան և անկողնի տիրին ճանապարհորդում էր, յանկարծ մի փոքր տատանուելուց յետոյ՝ կանգնեց փոքրիկ ոտների վրայ և հիացումից ու երկիւղից բարձր ձայնով աղաղակելով, որով Մէգին ու Ռօբէնին ստիպեց գլխները բարձրացնել, ուղղակի վազեց նոցա մօտ և դէմքը թաղցրեց

Մէգի ծնկներումը, դողալով զարմանքից ու ուրախութիւնից։ Մէգի ուրախութեան վերջ չկար, Նորան մի փոքր տխրացրեց այն միտքը միայն, որ այս բանը չկարողացան տեսնել ոչ հայրն ու ոչ էլ մայրը։

—Իսկ Աստուած տեսնում է, թէ ինչպէս քուրիկը մեզ է գալիս, հարցրեց Ռօբէնը։

—Ի հարկէ, տեսնում է, պատասխանեց Մէգը։ Նորա փոքրիկ ցաւն էլ անցաւ այժմ։ Նա հաւատացած էր, որ Աստուած չէր կարող չսիրել մանկիկին ու Ռօբէնին, իսկ եթէ Նա նորանց սիրում է, ուրեմն և Ինքը կհոգայ նոցա մասին և իրան էլ կ'սովորցնի, թէ ինչպէս հոգայ այդ, մինչև հօր գալը։ Այս օրը մանուկների համար նոյնքան բաղտաւոր անցաւ, որքան և Ռօբէնի ծննդեան օրը, թէպէտև անձրևը անդադար գալիս էր և առաստաղից կաթելով ներքևը դրած անօթումը, ցայտում էր Տէմպլի այդու շադրուանի նման։ Բայց դժուար էր բաղտաւոր լինել երբ Կիտտիի շիլլինգն էլ ծախսեց և Մէգը չունէր անդամ մի բուռն ալիւր։ Ռօբէնն ու մանկիկը [illegible] էին լինում, հաց էին խնդրում, իսկ աղջիկը [illegible] ունէր, որ կրակ վառէր, ոչ մոմ, որպէս զի մանուկները մթնում չնստէին Նոյեմբերի երկայն գիշերներին։ Կիտտին ամբողջ օրերով մեն [illegible] դէս ու դէն և շատ ուշ ուշ էր վերադառնում տուն. այն օրից, երբ նա Տէգին համբաւ բերեց Նորա հօր մասին, աղջիկը այլ ևս չէր տեսել Նորան։ Բայց յանկարծ Նորան մի բաղտաւոր միտք լուսաւորեց և նա սկսեցում այս բանը մտածելուց յետոյ՝ զարմացաւ։ Մի՞թէ չի կարելի իւր լաւ, կարմիր հանդերձը և կանաչ ժա-

պաւէնով գլխարկը գրաւ դնել։ Ի հարկէ, դժուար էր նոցանից բաժանուել, գոնէ ժամանակաւորապէս, բայց նա մխիթարւում էր այն մտքով, որ հայրը վերադառնալով յետ կառնի նրանք։ Իսկոյն Մէգը սընդուկը դուրս քաշեց, սկսեց հանել շորերը մի առ մի շոշափելով, որ մթնումը սխալմամբ Ռօբէնի կամ մանկան շորը չհանի և իւր թանգագին կապոցով ճանապարհ ընկաւ։ Ճանապարհին նա հաշուեց, թէ որքան շելլինգ կան իւր ապրանքին և թէ արդեօք այդ փողերը կարող են պահպանել իրանց մինչև հօր գալը։ Գրաւ վերցնողի խանութը Ռօզմերի նեղ փողոցի մի փոքրիկ ցեխոտ անկիւնումն էր. այնտեղ էլ նոյնպէս, ինչպէս և վերև սենեակները, լի-քն էր նոյնպիսի կապոցներով, որպիսին բռնած ունէր փոքրիկ Մէգը իւր հին շորի տակ։ Պատուհանից լոյս էր տալիս գաղջ լապտերը. նստարանի վերայ դժնեայ հայեացքով մի մարդ և ուշադրութեամբ նայում էր լրագրի թերթին։ Երկչոտութեամբ կապոցը դնելով դիտին, Մէգը բպասեց որ վերջացնի կարդալը։ Վերջապէս, լրագիրը դեն դնելով, խանութպանը բացարեց կապոցը, յետ քաշեց կարմիր շորը, գլխարկը բարձրացրեց ձեռքով և արհամարանքով սկսեց նայել մէկին ու միւսին։ Խանութը մոտ էլի մէկը, բայց Մէգը, շփոթմունքից ու սպասելուց յուզուած, չնկատեց նորան։ Ապրանքը յետ դարսելով, խանութպանը արհամարհելով յետ շպրտեց դէպի աղջիկը։

—Տասը պէնս կտամ երկուսին, ասաց նա, նորից լրագիրը ձեռք առնելով։

—Օհ, խնդրում եմ, գոչեց փոքրիկ Մէգը, յու-

սահատութիւնից խելքը կորցնելով. միփոքր աւելի տուէք. ես տանը երկու փոքրիկ մանուկներ ունիմ, և ոչ հաց ունենք, ոչ ածուխ ու ոչ մոմ։ Այսքանը դժուար թէ տասը պէնսով տան։ Հաւատացէք, որ իմ կարմիր հանդերձը աւելի թանդ արժէ... չգիտեմ, թէ քանի շելլինգ արժէ նա։

—Դնա տուն, աղջիկ, լսուեց նորա ետևից Կիտաթի ձայնը, ես քեզ երեք շելլինգ կերերեմ այդ շորի համար և մի շելլինգ էլ գլխարկի համար-բոլորը չորս շելլինգ։ Միստէր Սլօմանը հին ծանօթս է և կանէ այդ։ Դեհ, տուն վազիր, ես բանը կշինեմ։ Մէգը վազեց, ուրախացած նորանով, որ բանը կարող է Կիտաթին յանձնել։ Փոքր ժամանակից յետոյ նա լսեց Կիտաթի ոտնաձայնը սանդղի վերայից բարձրանալիս, և առաջ գնաց նորա մօտ։ Կիտաթին նորա ձեռքը դրեց չորս շելլինգ։

—Մէգ, ասաց նա, այդպիսի բանը միշտ ինձ յանձնիր։ Քեզ միշտ կխաբեն, բայց ես չեմ խաբի, ինձ համար բան չարժէ դա, եթէ միայն կհաւատաս ինձ։ Տես, միւս անգամ ինքդ չգնաս։ Չէ՞ որ Աստուած հոգում է քո մասին։

—Այո՛, նա հոգում է, ժպտալով պատասխանեց Մէգը. ապա թէ ոչ, դուք չէիք երևալ խանութի մօտ նոյն իսկ միջոցին, երբ ես այնտեղ էի և ինձ կտային միայն տասն պէնս։ Մի՞թէ այս հոգալ չէ նշանակում։

—Չգիտեմ, ասաց Կիտաթին, միայն թոյլ տուր որ միւսանգամ ես անեմ այդ բանը քեզ համար։

Այժմ Մէգը ցերեկուայ լուսով ընտրեց անդու-

կում հանդերձեղէնները, աշխատելով Ռոբէնի ու մանկան շորերը ազատ պահել գրաւ դնելուց։ Նա վախենում էր, թէ մի՛ գուցէ հայրը խիստ աղքատացած վերադառնայ և չկարողանայ ազատել շորերը։ Վերջապէս արկղը համարեա դատարկուեց. միայն կնքած ծրարը շարժւում էր միջին մի ծայրից դէպի միւսը, երբ արկղը տեղից վերցրին։ Բայց երբէք Մէգի մտքովը չէր անցնում նորանից օգուտ քաղել։ Նա զարհուրում էր մինչև անգամ նորան նայելիս, որ դորանով էլ Էնգէլ-Կօրտում կասկած չառնեն նորա գոյութեան մասին։ Երեկոյեան աղօթքի ժամանակ Աստծուց խնդրելով, որ պահպանի այն փողերը, նա մինչև անգամ չհամարձակեց շշնջալով ասել իւր աղօթքը, այլ միայն հոգով դարձաւ Աստծուն. Նա վախենում էր, թէ մի՛ գուցէ պատերը լսեն նորան։ Բայի Կիտոտից ոչ ոք չէր ճանաչում նորա սենեկին և Կիտոն էլ հաւատարիմ էր իւր խոստմունքին։ Այն ժամանակից, երբ նորա մօր դագաղը դուրս տարան, երբ Կիտոին բանտից վերադարձաւ և երբ Մէգը տօնեց Ռոբէնի Ծննդեան օրը, ոչ մի կենդանի էակ չէր մտել նոցա դուռն շէմքը։

Բայց ահա Նոյեմբերն էլ լրացաւ, անցաւ և Դեկտեմբերի մի մասը։ Գրաւ դնելու իրեղէնները համարեա հատան։ Այդ տարուայ մէջ նոցա սենեկի կապալի ժամանակն էլ լրացաւ և Միստէր Գրիգգը դուրս պիտի անէր նորան մանուկների հետ միասին։ Ի՞նչ անէր։ Այժմ ինչպէս պահէր Ռոբէնին, մանկան ու այն փողերը, որոնք պատկանում են իրեանց հօր ընկերոջ։

ԳԼՈՒԽ IX

Մէգը հարկաւոր եղած ժամանակ բարեկամներ է գտնում։

Մէգի համար եկան ծանր օրերը։ Յուրտը, բարեբաղդաբար, դեռ խիստ չէր, ապա թէ ոչ, մանուկները ցրտից կսառէին ցուրտ սենեկում։ Մէգը արդէն գրաւ էր դրել իւր մօր, իրա և Ռոբէնի բոլոր շորերը. մնացել էր գրաւ դնելու միայն նոցա հասարակ անկողնին ու խղճուկ կահկարասիքը։ Բայց Մէգը չկորցրեց իւր հոգեկան արիութիւնը։ Երբ եղանակը մի փոքր մեղմ էր լինում, նա մանուկների հետ գնում էր փողոցը, և պանդոկների առաջ զբօսնում էր. այնտեղ ստորնայարկ խոհանոցներից տաք օդ էր փչում. որը մի փոքր տաքացնում էր մանուկների՝ ցրտից դողացող անդամները։ Դեկտեմբերի կիսի մօտերքը եղանակը խիստ ցրտեց և Մէգը ստիպուեցաւ և իւր վերջին մխիթարութիւնից։ Սովորականի պէս նա մանուկների հետ դուրս գնաց փողոց, բայց նոքա երեքն էլ բոբիկ էին, ոչինչ չունէին հագնուած,, ոչնչով չէր ծածկուած նոցա մարմինները, բացի հին, պատառոտած ցնցոտիներից։ Մէգի ու Ռոբէնի ոտները ցրտից կապտել էին. բայց աղջիկը մի աւանձին նեղութիւն չէր զգում,—նա միայն եղբօրն էր նայում։ Նորա ծննդեան օրից, աղայի դէմքը նիհարանում էր ու դեղնում, իսկ նորա սեւուկ աչերը կորցրին իրանց նախկին կենդանութիւնն ու փայլունութիւնը։ Մէգի սիրտը լցւում էր արիւնով, երբ տեսնում էր, որ նա

դանդաղ քայլերով հեռանում էր իրան։ Նա շտապեց դեպի մի պանդոկ, որից երկաթե վանդակի միջով տաք օդ և կերակրների անոյշ հոտ էր բուրում. բայց մոռանալով Նորան, աղջիկը նորա փեղկերն ու խոհանոցի պատուհանները փակ գտաւ։ Խղճուկը տխրութեամբ յետ դարձաւ, սիրտ տալով տղային, որ աղերսողում լաց էր լինում։ Ռոբէնը հաղիւ էր գնում Նորա հետ. նա մի տեղ երկաթից կարել էր ցրտից սառած ոտը և վերքից արիւն էր դուրս գալիս։ Դառնալով դեպի մի փոքր փողոց, նոքա մոռեցան մի փոքրիկ կրպակին, որի մոտով առաջ շուտ շուտ էին անցնում։ Նորա պատուհանում դրած էին մի քանի հացեր, իսկ երկու երեք ամաններում կային լաւ կերակուրներ, որոնցով երբեմն մանուկները կերակրուում էին ոտն օրերին, երբ նոցա հայրը տանն էր լինում։ Դռան ներքին կէսը փակ էր, իսկ վերինը յետ քաշած, այնպէս որ ադատ կարելի էր տեսնել սենեկի ներքին մասը։ Փակած մանուում իսկոյն երևեցաւ Մէգի սև հին գլխարկն ու Նորա դէմքը, որ ուշադրութեամբ կանգնեց սպիտակ հացերի առաջ։ Տեսքը շատ հրապուրիչ էր, բայց նա արդէն պատրաստուում էր մոտիկ գնալ, երբ մէկի քաղցր ձայնը կանչեց Նորան խանութի մութ տեղից.

—Էյ, մանուկ, ես վաղուց է, որ քեզ չեմ տեսնում. ի՞նչպէս են Ռոբբին ու մանկիկը։

—Նոքա այստեղ են լինում մոտ, սիր, շնորհակալ եմ ձեզանից, միայն մենք վատ ենք ապրում, պատասխանեց Մէգը, սովորականից առաւել անտարբերութեամբ, որովհետև նա այդ օրը շատ վատ դրութեան մէջ էր։

—Ինչպէս, չէ՞ որ հօրդ նաւը վերադարձաւ, ասաց Նորան բարեհոգի բարեկամը նաւահանգստից, մոռանալով Նորան և բերանը սրբելով, որ, ինչպէս երևում էր, նոր էր հաց կերել։ Ինչո՞ւ էք վատ ապրում դուք։

—Հայրիկը նաւի հետ չեկաւ, պատասխանեց Մէգը և Նորա ձայնը դողաց։

—Մտիր այստեղ, պատմիր թէ բանն ինչումն է, ասաց նա։ Միստրիս Բլոսսոմ, այստեղ եկէք, խընդրեմ։ Խանութի ետև մի փոքրիկ խոհանոց կար, որից պատուական կերակրների հոտ փչեց, երբ մի յիսնամեայ կարճահասակ հատ կին, կարմիր այտերով դուռը բացարեց, հարցնելու թէ ինչ է հարկաւոր։ Մէգի բարեկամը նշան արեց Նորան հացի դէպքով, որ ձեռքին բռնած ունէր և նա մոտեցաւ Նորան։

—Ահա այս մանուկները, երևի շատ են քաղցել, նայեցէք, Միստրիս Բլոսսոմ, չէ՞, ասաց նա։ Հը, լաւ հոտ չէ՞, ասաց նա Մէգին, սև ակամայ հոտէր առնում Նորանից։

—Այո՛, սիր, ասաց նա։

—Ես արդէն կուշտ եմ, Միստրիս Բլոսսոմ, շարունակեց Նորա բարեկամը. մնացածը սրանց տուէք։ Դե՛հ, ասացէք, մանուկներս, ինչո՞ւ հայրդ տան չեկաւ։

—Նա տկարացել է և Նորան սահմանուած են ելել աշխարհի միւս կողմ հիւանդանոցումը թողնել

պատասխանեց Մէգը, արտասուալից աչքերը դարձնելով իւր բարի բարեկամի վերայ։

—Իսկ մանրդ ինչ եղաւ։

—Մայրիկը մեռաւ, պատասխանեց Մէգը։

—Մեռաւ, կրկնեց նա. այժմ ո՞վ է ձեզ մօտ, մանուկներս։

—Մեզ մօտ, բացի Աստծուց ո՛չ ոք չկայ, պարզ ու կարճ պատասխանեց աղջիկը։

—Տէր Աստուած, ես դեռ այդպիսի բան չեմ լսել, գոչեց Միստրիս Բլոսսոմը, շտապով վերցնելով մանուկը աղջկայ ձեռքից։

—Ես էլ, ասաց պանդոկատէրը, գրկելով Ռոբէնին ու նորա հետ մտնելով տաք խոհանոցը։ Այնտեղ պղնձում եփւում էր թափան. իսկ կրակի մօտ դրած էր մի կոլոր սեղան, երկու մարդու ճաշի պատրաստութեամբ։ Բարի մարդը նստեցրեց տղային Միստրիս Բլոսսոմի տեղը, իսկ Մէգին իւր բազկաթոռի վերայ։

—Ահա, մի քիչ կերէք, ասաց նա, դնելով նոցա առաջ լիքը ափսէներ. Միստրիս Բլոսսոմ, տուէք սոցա գետնախնձոր ու հաց... մանկիկն էլ կուտի։ Դե՛հ, այժմ ես գնում եմ։ Միստրիս Բլոսսոմ, կարգադրեցէք, որ նոքա էլի գան այնտեղ։ Եւ արդարև մի ըսպէից յետ դուրս գնաց նա. Մէգը նստեց լայն բազկաթոռի վերայ, հաղիւ կարողանալով իւր մանրիկ ձեռներով վարել ահագին դանակնու պատառաքաղը։ Նա ըստկզբում չկարողացաւ մի թիքայ բան կուլ տալ և աչքերը չէր հեռացնում Ռոբէնից ու մանկիկից, որ հագութեամբ ծծում էր արգանակի մէջ թրջած գետ-

նախնձորը։ Միստրիս Բլոսսոմը համոզում էր նորան որ ուտի և նա էլ աշխատում էր կատարել բարի կնոջ ցանկութիւնը, բայց յանկարծ նորա ամբողջ դունատ դէմքը դողաց, և աղջիկը դանակն ու պատառաքաղը ձեռքից վայր ձգելով տարածեց երկու ձեռները։

—Ներեցէք տիկին, բայց ես այնքան ուրախ եմ, ասաց փոքրիկ Մէգը մի փոքր ուղղուելով։ Ռոբբին ու մանկիկը օրտով ուզում էին բան ուտել, և ես ոչինչ չունէի նոցա տալու։

—Բայց դու էլ քաղցած կլինիս, պատասխանեց Միստրիս Բլոսսոմը և նորա շաղ այտերի ու քթի ծալուածքում թափուեցան արտասուքի կաթիլներ։

—Ո՛հ, այո՛, գոչեց Մէգը, բոլորովին հանգստացած, երեկ երեկոյեանից ես ոչինչ չեմ կերել, բացի մի կտոր հացից, որ տուեց ինձ Կիտտին։

—Դե՛հ, ուրեմն կուշտ կեր, հոգիս, պատասխանեց Միստրիս Բլոսսոմը, իսկ ո՞վ է այդ Կիտտին։

—Նա մեծ աղջիկ է և բնակւում է վերնատանը մեր սենեկի եռևը, ասաց Մէգը, սկսելով ուտել։ Նա ինձ ամեն բանում օգնում է, տանում է ինձ համար իրեղէններ դրաւ դնելու, որովհետև նոցա համար նորան աւելի շատ են տալիս, քան թէ ինձ։ Կիտտին շատ բարի է դէպի մեզ։

—Ուրեմն դու ամե՞նը դրաւ ես դրել, հարցրեց Միստրիս Բլոսսոմը։

—Մնում են միայն մանկան վերնարկը և գլխարկը, տխրութեամբ պատասխանեց Մէգը։ Նոցա համար միայն մի շիլլինգ են տալիս և հենց դորա համար

ափսոսում եմ տալ։ Ես աշխատեցի Ռոբբիի գլխարկն ու գոգնոցը յեռ պահել, նոքա բոլորովին նոր են, բայց սափրուեցայ նրանք էլ տալու... և մեր բոլոր կոշիկներն էլ, աւելացրեց Մէգը, ցոյց տալով Ռոբէնի բոբիկ ոտը, որից արիւն էր վազում։ Նայեցէք, տիկին, ինչպիսի վէրք ստացաւ խեղճ Ռոբբին։

—Խեղճ տղայ, ցաւակցութեամբ ասաց Միսարիս Բլոսսօմը. ես կլուանամ նորա փոքրիկ ոտները, երբ ճաշը կվերջացնի, իսկ դու էլ քունը լուա, հոգիս։

Մէգը մի քանի րոպէ լռեց, ախորժանոք ուտելով տաք թափանը և տաքանալով տաք ու բաղմակարասիք սենեկում։ Սա Լօնդօնի շատ լուսաւոր տեղն էր։ Բայց լոյսը միայն սենեկումն էր, իսկ փողոցով նոյն իսկ պատուհանի առաջ բարձր պատ էր բարձրանում, որ բոլորովին ծածկում էր նորանից երկինքը։ Տան նեղրսը տիրապետում էր մաքրութիւն ու խստակութիւն. քարայատակի վերայ մի բիծ չէր գըտնուի. այնպէս որ, ներս լինելով, դժուար կկարծէիր, որ փողոցումը ցեխ էր։ Ինքը Միսարիս Բլոսսօմն էլ առոյգ ու գեղեցիկ էր, ինչպէս մի գիւղացի կին. բայց նորա լիք և առողջ դէմքը տխուր արտայայտութիւն ունէր, որ պարզ կարելի էր նշմարել, երբ նա լռում էր.

—Դե՛հ, հոգիս, այժմ ի՞նչ ես մտածում անել, ասաց նա, երբ Մէգը վայր դրեց դանակն ու պատառաքաղը, հատատացնելով բարի կնոջ, որ այլ ևս չի կարող ուտել։

—Ինքս էլ չգիտեմ, պատասխանեց աղջիկը։ Ես իրաքանչիւր օր սպասում եմ հօրս։ Եթէ ես կարողանայի մի բան ձեռք բերել մանուկներիս համար, և

մի կտոր հաց էլ ինձ համար, այն դէպքում էլի ինչպէս և իցէ մի փոքր ժամանակ կկառավարուէինք, բայց երկար չենք կարող ապրել։

—Դուք սափրուած կլինէք աղքատանոցը գնալ, ասաց տանտիկինը։

—Օ, չէ չէ, ո՛չ երբէք, աղաղակեց փոքրիկ Մէգը, իւր կողմ քարշելով Ռոբէնին և զօռով նորան նստացնելով իւր ծնկան վերայ, այնպէս որ, բոլորովին թաքկացաւ այնտեղ։ Ես երբէք չեմ անի այդ բանը։ Մենք ինչպէս և իցէ կկառավարուենք, մինչև հօրս գալը։

—Դուք ո՞ւր էք բնակւում, հարցրեց Միսարիս Բլոսսօմը։

—Օհ, մի շատ վատ տեղ, պատասխանեց Մէգը վախենալով, որ մի գուցէ դան իրա մօտ, և շատ հեռու Ռոզմերի-Լէնից այն կողմը... պիտի փողոցն անցնել յետոյ պէտք է պտտել մի ուրիշ նեղ փողոց։ Ա՛յ էնտեղ ենք բնակւում։

Միսարիս Բլոսսօմը մի քանի րոպէ նստած էր մտածման մէջ ընկղմուած։ Նորա ձեռքերի վերայ պառկած մանուկը քնեց։ Մէգը գրկելով Ռոբէնին, շարժուած սկսեց նայել իւր նոր բարեկամի երեսին։

—Դե՛հ, ասաց վերջապէս բարի կինը, վաղը դարձեալ եկէք այստեղ, իսկ ես մինչև խորհուրդ կանեմ Միստէր Ժօրժի հետ.. որին դուք այստեղ տեսաք, նա իմ վարձակալն է։ Նա ձեզ այստեղ բերեց և գուցէ համաձայնի բանը մի կերպ գլուխ բերել։

—Շնորհակալ եմ ձեզանից, տիկին, պատասխանեց

Մէգը։—Իսկ դուք էլ ունիք փոքրիկ մանուկներ, աւելացրեց նա։

—Տանտիկնոջ դէմքի վերայից գլորուեցան արտասուքի կաթիլներ և նա խկոյն չկարողացաւ խօսել։

—Ունէի քեզ պէս մի փոքրիկ աղջիկ, ասաց վերջապէս Միստրիս Բլոսսոմը. այնուհետև տասը տարի է անցել։ Ինչ հիանալի երեխայ էր, կարմրիկ, ուրախ... ամէնքի ուշադրութիւնը գրաւում էր դէպի ինքը։ Ես էլ շատ լաւ պահպանում էի նորան։

—Ի՞նչ էր նորա անունը, հետաքրքրութեամբ հարցրեց Մէգը։

—Հարևանները նորան Պօղլ (փնջիկ) էին կանչում, որովհետև նորա ազգանունը Բլոսսում (ծաղիկ) էր, պատասխանեց տանտիկինը, ժպտելու հետ միասին արտասուք թափելով։ Մենք գիւղումն էինք ապրում. ես մի փոքրիկ խանութ ունէի, պարտիզիկ էլ ունէի և թռչուններ էլ, ձուաներ էլ—ու այնպէս թարմ, որպիսին ոչ ոք չէր ծախում այնտեղ... իմ Պօղլն էլ կատարեալ փնջիկ էր։

Միստրիս Բլոսսոմը լռեց և տխրութեամբ գլուխը շարժելով, նայեց բաղտաւոր մանկիկին, որ պառկած էր նորա ծնկների վերայ։ Խեղճ կնոջ սիրտը խիստ ցաւաց։

—Պօղլն մեռաւ, կամաց հարցրեց Մէգը։

—Չէ, չէ, գոչեց Միստրիս Բլոսսոմը։ Հարիւր անգամ աւելի լաւ էր, որ մեռնէր։ Չէ, նա վատ աղջիկ դուրս եկաւ։ Դու աշխատիր որ լաւ աղջիկ դառնաս։ Իմ Պօղլն տանից դուրս գնաց. և այլ ևս չվերադարձաւ իւր մօր մօտ, որ պահել է նորան երբ նա մանուկ էր ինչպէս այս երեխան։ Ո՛հ, ես Աստծուն շնորհակալութիւն կանէի, եթէ այն ժամանակ նորան դագաղի մէջ տեսնէի։

—Ցաւալի բան է այդ, ասաց փոքրիկ Մէգը տխուր ու կարեկցական ձայնով։

—Այնուհետև երեք տարի է անցել, շարունակեց տանտիկինը, նայելով մանկան։ Ես խանութս տուի հարսիս և եկայ այստեղ, յուսալով, որ գուցէ երբ և իցէ խեղճ աղջիկս դայ այստեղ հաց առնելու։ Ես գիտէի, որ նա այստեղ Լօնդօնումն է։ Բայց որքան ժամանակ է սպասում եմ ահա և բաւականութիւն չեմ գտնում. այն ինչ Միստէր Փօրժը չի կարող իմ պարտականութիւնները կատարել երբ ես նստած պատուհանից դուրս եմ նայում։

—Մի՞շտ նորան էք սպասում, ասաց փոքր Մէգը։

—Այո՛, նորան եմ սպասում, ասաց Միստրիս Բլոսսոմը, բայց նա բոլորովին չի երևում։

—Դուք խնդրել էք Աստծուց, որ նորան այստեղ ուղարկէ, հարցրեց աղջիկը։

—Ո՛հ, հոգիս, ամեն օր դրա մասին խնդրում եմ նորան։

—Դե՛հ, ուրեմն նա անպատճառ երբ և իցէ կգայ այստեղ, ուրախ ուրախ աղաղակեց Մէգը։ Սա ճշմարիտ է, վասն զի Յիսուս Քրիստոսն է ասում այս Աստուածաշնչում։ Դուք խնդրել էք նորան—և նա կկատարէ ձեր խնդիրը։ Ա՛յ մենք էլ էդպէս ենք սպասում հայրիկին։ Ես չգիտեմ թէ երբ կգայ նա—այսօր թէ վաղը, բայց գիտեմ, որ անպատճառ կգայ,

—Աստուած օրհնի քեզ, գոչեց Միստրիս Բլոսսոմը,

յանկարծ վերկենալով և մանուկը տալով Մէգին՝ գրկեց երեքին միասին։ Ես կապասեմ և կյուսամ, որ Նա կլսէ իմ աղօթքը, Նա ուղարկել է ձեզ ինձ մխիթարելու և սիրա տալու համար։ Տէր Աստուածը թող օրհնի ձեզ բոլորիդ։

Միսարիս Բլօսսօմը խսկոյն չհանդստացաւ. երբ նա արդէն հանդարտուեց, Մէգի ու մանուկների տուն գնալու ժամանակն էր, որովհետև մի փոքր լուսով պիտի դառնային։ Բարի կինը շորի կտորով փաթթեց Ռօբէնի ոտի վէրքը, իսկ Մէգին տուեց հաց, պատուիրելով, որ վաղն էլ անպատճառ գայ իր մօտ։ Աղջիկը դուրս գալով անդադար դէպի այն խանութն էր նայում, որի դռնից երկար ժամանակ տեսնում էր Միսարիս Բլօսսօմի սպիտակ ալլլով փաթթած գլուխը, որ սիրով շարժում էր ամէն անգամ, երբ Մէգը յետ էր նայում։ Նախ քան փողոցը կպտտէր, Մէգը բարձրացրեց մանկան և վերջին անգամ գլուխ տուեց ճնաս բարևի։ Նոքա մտան միւս փողոցը և աչքից կորցրին իրանց նոր բարեկամին։

ԳԼՈՒԽ X

Փոքրիկ Մէգը կար է. անում։

Հեռևեալ առաւօտ Մէգը ու նորա մանուկները նորից գնացին Միսարիս Բլօսսօմի խանութը, ուր նախընթաց օրուայ պէս խոհանոցում՝ կրակի մօտ նստած էր տանտիկինը, որ ուրախ ուրախ ընդունեց նոցա։ Երբ նոքա տաքացան և տաք սուրճ խմեցին

հացով, տանտիկինը ասաց Մէգին ծանր կերպով։

—Ես Միստէր Ժօրժի հետ խօսեցի ձեր մասին և այս վճռեցինք, ասաց նա։ Նա չի կարող իմ փոխանակ պարտաւորութիւններս կատարել, ինչպէս որ ուզում էի, քեզ յայտնի պատճառներով և ինձ մի աղջիկ կամ մի աղախին է հարկաւոր։

—Ո՜հ, տիկին, ասաց փոքրիկ Մէգը, ես տանիցս դուրս գալ չեմ կարող. ես մօրս խօստացել եմ այնտեղ մնալ մինչև հօրս վերադառնալը։ Խնդրեմ չբարկանաք սորա համար։

—Ես չեմ բարկանայ, զաւակս, ես միայն այն եմ ասում, որ ինձ մի աղջիկ է հարկաւոր, որ ամէն առաւօտ գար և երեկոյին գնար, ինչպէս վարձկան։

—Այրիկս երբեմն երբեմն օրով բանում էր, նկատեց Մէգը։

—Ես հարուստ չեմ, ասաց Միսարիսս Բլօսսօմը. իսկ Միստէր Ժօրժը օգնում է իր ծերունի հօրը, որ գիւղումն է ապրում, որտեղ էլ ես էի ապրում. ես նորան լաւ եմ ճանաչում, այնպէս որ քեզ մեծ վարձ չենք կարող մենք տալ։ Դու ինձանից կը ստանաս օրական մի գրվանքայ հաց, իսկ Միստէր Ժօրժից՝ երեք պէնս, որովհետև այժմ ձմեռ է։ Համաձայն ես։

—Բայց ես ի՞նչ անեմ Ռօբբիին ու մանկան։

—Այնպիսի հարևան չունիք, որ կարողանար նայել նոցա վերայ, ասաց Միսարիսս Բլօսսօմը։

Մէգը մտածեց։ Երեկ երեկոյին Կիտին ասել էր նորան, որ բան է գտել և որ մի քանի օր տանը կմնայ. ուրեմն և նա կարող էր մանուկների վերայ

նայել։ Մէգը կտար նորան ածուխ, որ իւր սենեկում հնոցը վառէր և այսպէս ազատելով նորան աւելորդ ծախսից, պարտքի տակ չէր մնայ նորա հոգացողութեան համար մանուկների մասին։ Նորան (Մէգին) իհարկէ մի փոքր դժուար էր գալիս մանուկներից այդպէս երկար միջոց բաժանուիլը. նա գիտէր, որ նոքա էլ միայնութիւն կքաշեն առանց իրան. բայց երկար չմտածեց, այլ շնորհակալութեամբ ընդունեց Միստրիսս Բլոսսոմի առաջարկութիւնը։

—Դու կարող ես առաւօտեան ժամը իններից վաղ չգալ. իսկ երեկոյին մութը կընկնի թէ չէ, կը գնաս։ Ընթրիք էլ կուտացնեմ քեզ, և մի բան էլ մեծ բաւականութեամբ կտամ մանուկներիդ տանելու համար։ Երբեմն երբեմն երեքով եկէք մեզ մօտ թէյ խմելու, գլխաւորապէս կիւրակէ օրերը, երբ Միստէր Ժօրժը տանն է լինում. երբ դու արդէն կկարողանաս քո շորերը թափել (դրաւ լինելուց ազատել), այն ժամանակ մենք միասին ժամ կերթանք... Դեհ, կտեսնենք, կտեսնենք։

Միւս առաւօտ Մէգը մտաւ իւր նոր պաշտօնի մէջ։ Շատ համբոյրներից ու մեծ բարև ասելուց յետոյ, նա մանուկները յանձնեց Կիտտիին և սա խոստացաւ նոյնպէս բարի լինել դէպի նոցա, ինչպէս ինքը Մէգն էր։ Եթէ մանուկների հոգը չունենար, աղջիկը ուրիշ լաւ բան չէր ցանկանալ, բայց եթէ մնալ Միստրիս Բլոսսոմի մօտ աղախնի պաշտօնով։ Բարի կինը այնպէս մայրաբար էր վարուում նորա հետ, որ Մէգը բոլոր հոգւով սիրեց նորան և մանկական հեռաբերքրութեամբ ու կարեկցութեամբ նայում էր, երբ նա լուսամուտի մօտ նստած մեծ գուլբան ձեռին, որ գործում էր Միստէր Ժօրժի համար, ուշադրութեամբ նայում էր իւրաքանչիւր անցկացող կնոջը։ Վերջապէս ինքը Մէգն էլ սկսեց ճանապարհին նայել, թէ արդեօք չի՞ անցկենայ Պօղին, որին Միստրիսս Բլոսսոմը լաւ նկարագրեց նորա առաջ. և երբ խանութը մտնում էր որ և իցէ հասակաւոր աղջիկ, Մէգը, շունչը բռնած սպասում էր, որ ահա Միստրիսս Բլոսսոմը կկանչի նորան նոյն անունը։ Միստէր Ժօրժն էլ չնայելով իւր խիստ դէմքին, բարի էր դէպի նա։ Նա, բացի օրական նշանակեալ երեք պէնսից, ընծայեց նորան նոր մաշիկներ։ Մէգը շուտ շուտ խօսում էր Միստրիսս Բլոսսոմի հետ նորա կորած աղջկայ մասին, որը վատ աղջիկ էր դուրս եկել և որին մայրը աւելի լաւ էր համարում դերեզմանումը տեսնել։ Միստէր Ժօրժը շուտով նկատեց, որ նորա ներկայութիւնը շատ լաւ ազդեցութիւն է արել տան տիկնոջ վերայ։

Եկաւ Քրիստոսի Ծննդեան տօնը։ Տօնի առաջին օրը կատարեալ ինքոյք էր Մէգի համար. թէպէտև Միստէր Ժօրժը դնայ դիւղը հօրը տեսնելու, Միստէր Բլոսսոմը իւր մօտ կանչեց երեխայոց ճաշելու և ամբողջ օրն անցկացնելու, մինչև որ նոցա քնելու ժամանակը կլինէր։ Ճաշից յետոյ նոցա հետ կրակի մօտ նստելով, նա պատմեց զանազան հետաքրքիր բաներ դիւղի, գաշտերի, այգիների և անտառների ու դաշտերի ճանապարհների մասին։

—Իսկ այդ ճանապարհները նոյնպէս ցեխոտ ու մութն են, ինչպէս Լօնդօնում մեզ մօտ Ռօզմէրի—

Լէնը։ Թէկ այնպիսիք են, ես այնպիսիները չեմ սիրում, ասաց Ռոբէնը։

—Օ՛հ, չէ՝, պատասխանեց Միստրիսս Բլոսսոմը. նոքա գեղեցիկ ծառուկներ են, որոց երկու կողմերում ահագին ծառեր են, գազաթներով միացած միմեանց հետ իսկ ցանկերի երկայնութեամբ ծաղկում են վարդեր և հոտաւէտ ծաղիկներ, այնտեղ լոյս է, թռչունները երգում են, սակայն ձեզ երբէք չի պատահած տեսնել նրանց։

—Իսկ հրեշտակներ կա՞ն այնտեղ, հարցրեց Ռոբէնը, յառելով իւր փայլուն աչքերը նորա վերայ։

—Չէ՝, չկա՛ն, գոնէ ես այդ չգիտեմ, պատասխանեց Միստրիսս Բլոսսոմը։

—Իսկ դև կա՞ յ այնտեղ։ շարունակեց հարցնել Ռոբէնը։

—Ա՛յ, կարծեմ նա այնտեղ էլ կլինի, ինչպէս և այստեղ, պատասխանեց Միստրիսս Բլոսսոմը։ Մարդիք ամէն տեղ կարող են վատ լինել, ապա թէ ոչ իմ Պոզին վատ աղջիկ չէր դուրս գալ։

Ռոբէնը էլ ոչինչ չհարցրեց, իսկ Միստրիսս Բլոսսոմը շատ ուրախ էր ուրիշ ուրիշ բաների մասին խօսելու համար։ Այդ օրը նոցա համար երջանիկ օր էր, միայն շատ շուտ վերջացաւ։ Մէգը փութաթեց մանուկներին, և Միստրիսս Բլոսսոմը համբուրեց նոցա ամէն մէկին, իսկ Մէգին ամէնից թունդ—չէ՞ որ նա նորա մեծ միսիթարութիւնն էր։ Տուն գնալով նոքա լսեցին Կիտտիի ձայնը, որ կանչում էր իրանց։ Մէգը մտաւ նորա սենեակը։ Սենեակը ապաք չէր, և

աղջիկը աշխուժով կարում էր մի կոպիտ զոլ զոլ շապիկ մի կտոր մոմի լուսովը։

—Դուք ամբողջ օրը ո՞ր էիք, Մէգ, հարցրեց Կիտտին, բարձրանալով իւր տեղը գուռատ գէնքը և ասասաւքից ու աշխատելուց կիսաբաց աչերը։

—Միստրիսս Բլոսսոմի մօտ, պատասխանեց Մէգը. այսօր չէ՞ որ Ծնունդեան ասնն է. օրքան էլ ցանկանում, որ դու էլ այնտեղ մեզ մօտ լինեիր այսօր, Կիտտի։ Մենք ինչպէս համով հաց կերանք և ինչ փառաւոր չայ խմեցինք։ Նա ինձ կարկանդակի կտոր էլ տուեց, օրից քեզ էլ բաժին կհանենք։

—Չէ՝, չէ՝, ասաց աղջիկը, նա իմ բաղադիս կը կանգնի։

—Օ՛հ, ինչպէս կարելի է, դոչեց Մէգը. նա շատ ընտիրն է. դուք անպատճառ մի կտոր պիտի ուտէք։

—Ի՛նչ, դուք դարձեալ խօսեցիք այն Պոզին մասին, հարցրեց Կիտտին, քնքշութեամբ սկսելով դարձեալ կարել։

—Մենք ամէն օր խօսում ենք նորա մասին, պատասխանեց Մէգը. Միստրիս Բլոսսոմը միշտ ապասում է. թէ երբ պիտի անցնի նա իւր պատուհանի մօտից։

—Այդ երբէք չի լինիլ, կարճ պատասխան տուաւ Կիտտին։

—Օ՛հ, անպատճառ երբ և իցէ կանցնի, ասաց զակեց Մէգը։ Միստրիսս Բլոսսոմը ամէն օր այդ մասին խնդրում է Աստծուց և նա անպատճառ կկատարէ նոցա խնդիրը։

—Եթէ նա վատացել է (փչացել է), ասաց Կիտ-

տին, ապա ուրեմն ոչ մի կերպ չի վերադառնայ նա մեր—այնպիսի լաւ կնոջ մօտ։

—Բայց եթէ նա վերադառնայ, մայրը էլ վատ չի համարի նորան, այնքան նա սիրում է իւր Պօղիին, ասաց փոքրիկ Մէգը։ Եթէ Ռօբբին երբ և իցէ փչանար, այնու ամենայնիւ ես նորան կսիրէի, քանի որ նա դարձեալ չէր խելօքացել։

—Ո՛չ Պօղին երբէք չի վերադառնալ, պատասխանեց Կիտտին և արտասուքի խոշոր կաթիլները թափուեցան նորա կարի վերայ։

—Կդառնայ, աղաղակեց Մէգը։ Ես նորան ամէն օր սպասում եմ, ինչպէս և հօրս։ Դուցէ վաղը նոքա երկուսն էլ վերադառնան։ Աղօթեցէք, որ Աստուած վաղը տուն վերադարձնի Պօղիին և հօրս։

—Ես շատ վատ կին եմ ու անարժան աղօթելու, հեկեկաց Կիտտին։

—Զգիտեմ, տխրութեամբ պատասխանեց Մէգը. ինձ ու մանուկներիս հետ դուք բարի էք։ Բայց արդէն մեր քնելու ժամանակն է։ Համբուրեցէք մեզ, քանի չենք դուրս գնացել։ Միստրիսս Բլոսսոմը ինձ երկու անգամ համբուրեց, ասելով, որ ես եմ նորա մխիթարողը։

Կիտտին կարը դեն ձգելով Մէգին պինդ գրկեց և նորա գլուխը կպցնելով իւր կրծքին՝ ասաց լոյս լինելով.

—Ո՛հ, սիրելի, բարի փոքրիկ Մէգ։

Յետոյ բոլոր երեքին մնաս բարև ասաց դողդոջուն ձայնով, ցանկանալով հանգիստ գիշեր և օրհնելով նոցա։

ԳԼՈՒԽ XI.

Փոքրիկ Մէգն ու Նորա մանկիկը։

Նոր տարին էլ եկաւ, իսկ Մէգի հայրը դեռ էլի չվերադարձաւ։ Կիտտին էլի դառաւ խռովասէր, իբր թէ երկար ժամանակուայ խելօքութիւնից յետոյ անպատճառ հարկաւոր էր, որ աղմկայոյզ ու յիմար բաներ անէր։ Նա ամբողջ օրերով տանը չէր լինում և գիշերը ուշ վերադառնալով հարբած, բարձրաձայն երդելով զարթեցնում էր ներքնայարկի բնակիչներին և հաւաքում սրիկաների բազմութիւն։ Սակայն, Մէգի ու մանուկների վերաբերութեամբ նա մնաց նոյնպիսի բարի ու քաղցր, և թախանձում էր, որ Մէգը առաջուայ պէս յանձնի նորան Ռօբէնի ու մանկան հոգացողութիւնը։ Բայց Մէգը այդ անում էր անհանգիստ հոգւով։ Ծանր էր թւում խեղճին, բայց նա չկորցրեց իւր վեհերտութիւնը և շարունակեց սպասել իւր հօրը, որի վերադառնալուն հաստատ հաւատում էր։

Մի անգամ երեկոյեան Մէգը դպրոցից վերադառնալով տուն սովորականից մի փոքր ուշ, որովհետև նոր տարուց յետոյ օրերը մեծանում են, բարձրացաւ Կիտտիի սենեակը մանչուկներին վերցնելու։ Նոքա այն տեղ չէին։ Միստէր Գրիգգը ասաց նորան, որ Կիտտին ճաշին գնաց ու նոցա էլ հետը տարաւ։ Այդ միջոցին Մէգը տեսաւ աղջկան, որը տատանուելով մտնում էր հայաթից, ձեռքին բռնած պինդ քնած մանկան։ Մէգը լուռ ու մունջ վերցրեց նորանից մա-

նուկը և Ռօբէնի հետ գնաց վերև։ Մանկան դէմքը խիստ կարմրել էր, իսկ ձեռները շատ սաք էին, ինքը մանուկն էլ Մէգի գրկում կեանքի ոչինչ նշոյլ չէր արտայայտում, միայն կոպքերը մի փոքր շարժւում էին կիսաբաց շրթունքներից թոյլ շնչառութիւն էր նկատւում։ Փակուելով իւր սենեկում Մէգը՝ պատկայրեց մանկիկին, կրակ արեց և թէյ պատրաստեց։ Ռօբէնն էլ անսովոր բան էր դարձել և դուրս էր տալիս անդադար, մինչև որ նա կպատրաստէր անհրաժեշտ պէտքերը։ Բայց մանկիկը բոլորովին չքնեց։ Մէգը նորա բերանում մի քանի կաթիլ սաք թէյ ածեց, բայց նա չկուլ տուեց այն և էլի շարունակ բոլորովին անզգայ պառկած էր մի սեսակ անհասկանալի, խորը քնով։ Մէգի աչքին մանկիկը լաւագոյն էր և մեր մեռած ժամանակուանից փոքրանում էր։ Աղջիկը մոռացրեց իւր շրթունքներին նորա փոքրիկ անզգայ ձեռքը, մոռանալով, որ մանուկը, կարելի է, մի փոքր բաց անէ աչքերը և ժպտայ այն քաղցրիկ ու սիրելի ժպիտով, որով միշտ պատահում էր նորան տուն վերադարձած ժամանակը։ Բայց նա շատ խորը քնած էր, այնպէս որ չէր կարող ժպտալ։

Փոքրիկ Մէգը ամբողջ գիշեր նստեց մանուկը ձեռքին, երբեմն երբեմն նորա քունը ընդհատւում էր, և նա կանգնում էր ելնելու, բայց երբէք աչքերը չբանալով։ Առաւօտեան էլ միևնոյն էր։ «Ելնի՞ թէ սա հիւանդ է.» հարցրեց ինքն իրան Մէգը։ Ըստ երևութին նորան ոչինչ չէր ցաւում։ Աղջիկը նորա հետ միասին մոտեցաւ դռան և կանգնեց Կիրտիին, խնդրելով գալ և նայել մանկան։ Բայց պատ-

ասխանի փոխանակ նա միայն լսեց ներքևից աղմուկ և մանուկների լացի ձայնը, կուսուղ կանանց աղաղակները, և հայհոյանք ու անէծք։ Մէգը դարձեալ նստելով մոր ամոռի վերայ կրակի մոտ, պատկացրեց մանկան իր ծնկան վերայ։ Ռօբէնը մոտը կանգնած կարեկցաբար նայում էր մանկան քնած փոքրիկ դէմքին, որը Մէգը կարող էր իւր մի ձեռքովը ամբողջ ջապէս ծածկել։ Ինչ անէր այժմ։ Էնդ-Կօրտում ոչոքի չէր կարելի օգնութեան կանչել։ Այն ինչ մանուկը, ինչպէս և այդ մթնավայրում ծնուած մանուկների մեծ մասը, կարող էր մեռնել. կարծես թէ կեանքը այդ ադմկի ու ցեխի մէջ մի խիստ զարհուրելի բան էր նոցա համար։ Մանկան մեռնելու մասին մոռածմունքը գլորեցին Մէգի աչքերից երկու—երեք կաթիլ արտասուք, որոնք թափուեցան մանկան քնած դէմքի վերայ։ Նա երկար չկարողացաւ լաց լինել, ցաւի ու յուսահատութեան բոթ զգացողութիւնը խլեց նորանից այն։

—Ինչո՞ւ Աստծուն չես խնդրում, որ քուրիկին գարթեցնի, հարցրեց Ռօբէնը ձեռքը մոտեցնելով մանկիկի ձեռքին։

—Զգիտեմ այդ լա՞ւ կլինի թէ չէ, պատասխանեց աղջիկը։ Մայրիկը միշտ Աստծուն խնդրում էր, որ մանկան էլ իրա հետ միասին տանի և որ սորա համար աւելի լաւ էր Նորա մոտ մնալ, քան այս տեղ։ Նա կցանկայի, որ մենք բոլորս կարողանայինք երկինքը գնալ, միայն ինչ կասէ հայրիկը, երբ տուն կդառնայ և մեզ ամենքիս մեռած կ'գտնի։

—Գուցէ Աստուած ինձ ու քուրիկիս վերցնի,

տխրութեամբ ասաց Ռոբբին, իսկ դու կմնաս հայրիկին սպասելու։

—Ես կցանկայի միայն, որ մեռնելուցս առաջ սա մի անգամ ձայն տար ինձ «Մէգ», գոչեց աղջիկը։

Մանկիկը կամաց շարժեց իւր նիհար անդամները և լայն բանալով կապոյտ աչքերը նայեց նորան և ժպտաց իւր քաղցրիկ ժպիտով։ Յետոյ նորից կամաց ծածկեց կոպքերը և նորա փոքրիկ դէմքը ընդունեց երկնային հանգստութեան արտայայտութիւն։ Մէգն ու Ռոբէնը զարմացած լուռ ու մունջ նայում էին այս փոփոխութեան. երբ Մէգը իւր ձեռքը կամաց դրեց մանկան ճակատին՝ նա նոյնպիսի սառնութիւն զգաց, որպիսին զգաց և իւր մեռած մօր դէմքին մօտեցնելիս։

Բայց փոքրիկ Մէգին անկարելի էր թւում, թէ մանուկը արդարև մեռած է։ Նա սկսեց տաքացնել նորա փոքրիկ ձեռքերն ու ոտները, ինչպէս այդ անում էր մայրը և սենեկում յետ ու առաջ գնալով, օրօրում էր մանկան երբեմն բարձր, երբեմն էլ կամաց։ Մանուկը սառն էր ու անշարժ։ Այն ժամանակ պառկացնելով նորան անկողնում և նորա ձեռները խաչելով կրծքին՝ Մէգը ինքն էլ պառկեց մօտը, մէջքը լուսի կողմը և բոլորովին անձնատուր եղաւ ցաւին ու յուսահատութեան։

—Եթէ ես Ատծուց խնդրէի, որ 'ի սէր Յիսուսի Քրիստոսի զարթեցնէր մանկան, մտածեց նա, նա կարելի է կատարէր աղօթքս, թէպէտև ես չգիտեմ, թէ լաւ կլինէր այդ։ Իսկ այժմ քուրիկս գնաց մօրս մօտ, հայրիկը կգայ և միայն ինձ ու Ռոբբիին

կգանի և մէկ էլ պահած փողերս։ Ո՜հ, աւելի լաւ է Ատծուն խնդրէի այն բանը։

—Մէգ, ասաց Ռոբբին, որ երկար ժամանակ լաց էր եղել և այժմ հանգիստ պառկած էր մանկան կողքին. ես լաւ չեմ, երևի ես էլ կերթամ հրեշտակների մօտ, ուր գնաց մայրիկը քուրիկիս հետ։

Մէգը վեր թռաւ և յուզուած նայեց նորան։ Ռոբբիի փայլուն աչքերը պղտորել էին, իսկ դէմքը այրուում էր տաքութիւնից. Նա անշարժ պառկած էր, երբ Մէգը նորա մօտ ծունկ չոքած և գրկած նորա գլուխը գանգատւում էր գլխացաւից։ Տղայի ճակատը խիստ տաք էր։ Մի րոպէ Մէգի շունչն էլ կապուեց. սա իւր արտասուալից դէմքը վայր թողեց ձեռքերի վերայ։

—Տէր Ատուած, աղաղակեց նա, Ռոբբիին մի տանիր, ինչպէս տարար քուրիկիս։ Կարելի է նորան դժուար էր այստեղ մնալ առանց մօրը, թէպէտ ես ամէնն արեցի, ինչոր կարողացայ,—իսկ մեր մասին հօ՝ բացի Քեզանից ոչ ոք հոգացող չկայ։ Բայց խնդրում եմ Քեզանից, Տէր, ի սէր Յիսուսի Քրիստոսի, ինձ մօտ թող Ռոբբիին հօրս սպասելու, ամէն։

Մէգը վերկենալով զգուշութեամբ բարձրացրեց Ռոբէնին և նորան քաղցրութեամբ համոզելով, մերկացրեց ու պառկացրեց մանկան հետ, որ քնած էր վերջին անդստանալի քնով։ Տղայի ներքնակը մի փոքր ժամանակուանից առաջ արդէն ծախած էր։ Այդ փոքրիկ գերդաստանի տխուր օրը մտենում էր իւր վախճանին. երեկոյեան աղօտ լոյսը ներս թափանցելով վերնատան պատուհանից, ընկաւ մեռած մանկան

անշարժ դէմքի և նորա հետ կարդով Ռօբէնի կիսաքուն դէմքի վերայ: Մէգը թեքուեց նոցա համբուրելու. նորան թւում էր, որ իւր սիրտը զարնւում է, երբ նա շրթունքներով ցուրտ դպաց մեռած երեխայի սառած բերանին կպցրած ժամանակ: Նա գլուխը փաթթելով սենեակը կողպէքով փակեց և վազելով գնաց Միսարիս Բլօսսօմի տուն:

—Ռօբէնն շատ հիւանդ է, հապա՛ւ այգպան կարողացա՞ ասել Մէգը, շնչասպառ մնալով խանութը, որի փեղկերը, նայելով որ դեռ խիստ վաղ էր, բաց էին. պիտի բժշկին կանչեմ... ո՞ւր կարող եմ նորան գտնել:

Միսարիս Բլօսսօմը արդէն հագնուած էր, գլուխն էլ ծածկած, և անբնական կերպով գունատ ու շփոթուած: Մէգին պատասխանելով նա ձեռքերը սրտին կպցրեց:

—Ես էլ հենց պատրաստւում եմ Էօնդօնի այս մասնի ամենալաւ բժիշկ Կրիսաթի մօտ գնալ. գնանք միասին: Նա ինձ լաւ է ճանաչում... Մէգ, այսօր իմ պատուհանի մօտից անցաւ Պօղնի նման, սակայն դրժգոյն ու նիհար մի աղջիկ. բայց երբ ես դուրս վազեցի փողոցը, նա սառների պէս անյայտացաւ: Ես կերթամ Կրիսաթի բժշկի մօտ, նա ամէն բան գիտէ, ինչ որ ինձ ու Պօղնին է վերաբերում:

Այլ Մէգը համարեա՝ չլսեց Միսաէր Բլօսսօմի խօսքերը. նորա բոլոր մտածմունքը Ռօբէնի մասին էր և նա շատ նեղանում էր, որ իւր ուղեկիցը դանդաղ էր գնում: Նորան թւում էր, որ նոքա խիստ շատ մոն եկան, քանի որ չէին անցել մեծ փողոցները, մեծ անբի մօտից. վերջապէս նոցա մէկի

դռնից տեսան մի պարոն, որ շտապով կառքէր նստում:

—Ա՜խ, տէր Աստուած, սա բժշկապետ Կրիսաթն է, աղաղակեց Միսարիս Բլօսսօմը: Կանգնեցրու նորան, Մէգ, ձայն տուր:

Բայց Մէգը առանց էն էլ վազեց փողոցի մէջ: Ցանկացած նա բոլորովին շփոթուեց. նա լսեց ձիանների դրոփիւն, անիւների դղրդոցը, յետոյ զգաց սարսափ ու ցաւ... տուէլի ոչինչ չմտածեց նա: Մանկիկն էլ ու Ռօբէնն էլ, որոնք վերնատան սենեկում պառկած էին, և նոյնպէս Միսարիս Բլօսսօմն ու Պօղնին էլ—բոլորն էլ անյայտացան նորա յիշողութիւնից: Նա վրայ ընկաւ ձիաներին, որոնք ճիչում էին նորան:

Ուշքի գալով փոքրիկ Մէգը իրան տեսաւ մի այնպիսի լուսաւոր, ուրախ սենեկում, որ մտածել անգամ չկարողացաւ, թէ ո՞ւր և ինչպէս է նա ընկել: Վառարանում ճրճռում էր կրակը, իսկ վերևը կախած էր հրեշտակների պատկեր, որոնք դէպի երկինք էին թռչում մանուկներ ձեռքերին բռնած: Պատերից կախած էին ոսկեայ փայլուն շրջանակներով պատկերներ, որոց վերայ պայծառ գոյներով նկարած էին թռչուններ ու ծաղիկներ: Նորա դիմացի անկիւնում դրուած էր մի ուրիշ մահճակալ, բայց նորա վերայ ոչ ոք չկար պառկած և նորա կողմը ամէն ինչ հանգիստ էր: Մէգը շփոթուած այն մտքով, որ իբր թէ նա մի տեղ է երկնքում, հանգիստ պառկած էր, երբ յանկարծ հարևան սենեկի բաց դռներից ձայն լսուեց.

—Ես միայն կցանկանայի իմանալ, թէ ո՞ւր է բնակւում այս խեղճը, ասաց ձայնը:

—Դժբաղդաբար, չգիտեմ, պատասխանեց Միսաբիսս Բլօսսօմը։ Ես քանի անգամ հարցրի դուրս մասին և նա միշտ մատնացոյց էր անում Ռօգմէրի—Լէնի վերայ, ասելով, որ այս փողոցից յետոյ մի ուրիշն է գալիս, և յետոյ մի խուլ նեղ փողոց, ուր իրանք են բնակւում։ Բայց նա տանը հարևան էլ ունի, մի աղջիկ, որին նա Կիտտի է ասում։ այս Կիտտին է նայում մանուկներին Մէգի բացակայութեան ժամանակ, նա այժմ էլ անպատճառ հոգս կտանի նոցա մասին։

Այս իսկ լսելին աղջիկը ուշքի եկաւ։ Նա յիշեց, թէ ինչպէս առանց դուրս գալիս համբուրեց մանուկներին ու դուռը կողպէքով փակեց։ Ո՜հ, Տէր Աստուած, նորա Ռօբբին ինչ կլինէր այժմ։ Մէգը բարձրացաւ անկողնից և բարձր աղաղակեց։ Իսկոյն նորա մօտ վազեց Միսաբիս Բլօսսօմը և մի ուրիշ անծանօթ տիկին։

—Ռօբբիս եմ ուզում, ո՞ւր է նա, գոչեց Մէգը։ Ռօբբիս է հիւանդ, չէ թէ ես... փոքրիկ քուրիս էլ մեռաւ, և նա էլ դուցէ այժմ մեռնէր։ Թոյլ տուէք ինձ խնդրեմ, վերկենալ։

—Պատմիր ինձ, թէ ի՞նչ է պատահել, ասաց Միսաբիսս Բլօսսօմը, նստելով մահճակալի վերայ և գրկելով Մէգին։ Մենք Կրիստի բժշկի մօտ ենք, նա խոստանում է իսկոյն Ռօբբիի մօտ գնալ։

—Մանկիկս երեկ առաւօտ մեռաւ, պատասխանեց Մէգը. յետոյ Ռօբբին հիւանդացաւ, ես նոցա միասին պառկացրի անկողնում և համբուրեցի, դուռը կողպէքով փակեցի և եկայ բժշկի եռևից։ Ամբողջ

գիշեր Ռօբբին միայն էր, միայն Աստուած կարող էր պահել նորան։

Իւր կարճ պատմութիւնից առաջ աղջիկը լաց չեղաւ. շփոթմունքը և խիստ մեծ ցաւը խլեցին նորանից այդ յատկութիւնը. բայց Աստծու անունը յիշելիս նորա աչքերը արտասուքով լցուեցին և գլուխը դնելով Միսաբիսս Բլօսսօմի ուսին՝ սկսեց հեկեկալ։

—Աստուած կպահի նոցա, ասաց Միսաբիս Կրիստին, բայց աւելի բան չկարողացաւ աւելացնել։

—Դու ո՞ւր ես կենում, հոգիս, հարցրեց Միսաբիս Բլօսսօմը։

—Ֆինդէլ—Կօրտում, պատասխանեց Մէգը. բայց առանց ինձ ոչ ոք չպիտի գնայ այնտեղ։ Ի սէր Աստուծոյ թոյլ տուէք վերկենամ, ես հիւանդ չեմ։

—Դու խիստ թոյլ ես, որդեակս, ասաց Միսաբիսս Կրիստին։

—Ես պիտի վերկենամ և գնամ, թախանձում էր Մէգը։ Ես խոստացայ մօրս մեր սենեկում առանց ինձ ոչ ոքի չթողնել։ Այնտեղ իմ մանուկներն են։ Եթէ դիցուք ձեր որդիքը հիւանդ լինէին, դուք կերթայիք նոցա մօտ, այնպէս չէ՞։ Թողէք ինձ, մի պահէք այստեղ։

Անկարելի էր նորա խնդիրներին հակառակել։ Միսաբիսս Բլօսսօմը մեծ զգուշութեամբ հագցրեց աղջկան, բայց Մէգը, այնու ամենայնիւ, չկարողացաւ մի միջոց իւր ոտքը թաղցնել, երբ շարժեց իւր վերաբորուած ձեռքը։ Կառք վարձեցին, Միսաբիսս Բլօսսօմը, Մէգն ու բժիշկ Կրիստին նստեցին նորանում և արագութեամբ շտապեցին դէպի Ֆինդէլ-Կօրտ։

ԳԼՈՒԽ XII

Փոքրիկ Մէգի վրդովմունքը վերջանում է։

Նոյն երեկոյին, երբ Մէգը գնաց բժշկի հետևից, Կիտոին վաղ դարձաւ տուն։ Նա աւելի վայելուչ տեսք ունէր, քան էր վերջին մի քանի գիշերները, և շատ ամաչում էր իւր վարմունքից։ Նա նստելով սանդխակի ամենավերին աստիճանի վերայ, պատրաստուեց աղօթք լսելու, որ պիտի կարդար փոքրիկ Մէգը։ Բայց, նորա փոխանակ լսեց Ռօբէնի լայն ու կօճը, որ կանչում էր քրօջը և ոչինչ պատասխան չէր ստանում։ Մի փոքր սպասելով, յուսալով լսել նորա ձայնը, Կիտոին վերջապէս կամաց դուռը բացեց։ Պատասխան չստացաւ։ Աղջիկը դարձեալ և դարձեալ բացեց։

—Ո՞վ է, երկչոտ ձայնով դոչեց Ռօբէնը։

—Ես եմ, քո Կիտոին, պատասխանեց նա. ուր է փոքրիկ Մէգը։

—Զգիտեմ, ասաց տղան, նա գնաց, ես ու քուրիկս մենակ ենք, քուրիկս քնած է և խիստ սառն է։

—Ինչո՞ւ ես լալիս, Ռօբբի, հարցրեց Կիտոին։

—Ես մենակ եմ, պատասխանեց Ռօբէնը։

—Մի վախիր, Ռօբբի, ասաց նա, աշխատելով նորան հանգստացնել. Կիտոին դուռն մօտ կնստի և քեզ համար լաւ լաւ երգեր կերգէ, մինչև որ Մէգն էլ կգայ։

Նա երկար նստեց։ Վերջապէս կէս գիշեր դարաւ, իսկ Մէգը դեռ էլի չվերադարձաւ։ Աղջիկը երբեմն երբեմն քաղցրութեամբ քաջալերում էր տղային կամ երգում էր նորա համար երգեր, ինչ որ մանկութիւնից արդէն գիտէր։ Բայց նա միշտ աւելի ու աւելի բարձր լաց էր լինում, Կիտոին վերջապէս վճռեց կոտրել իւր խոստումը, որ տուել էր Մէգին և դուռը բանալ իւր բանալիով, որ մանուկներին իւր մօտ վերցնի։

Նա մոմ վառեց և մտաւ մութ սենեակը։ Վառարանի կրակը հանգած էր. Ռօբէնը նստած էր դոշակի վերայ, լաց եղած, սարսափից աչքերը մեծ բացած։ Մանկիկը, որ պառկած էր նորա մօտ՝ չէր շարժւում։ Նորա ձեռքերը խաչաձև դարսած էին կրծքին։ Կիտոին մոմը մօտ տարաւ քնած մանկան մօտ, բայց նա միշտ անշարժ էր։ Ինչ էր եղել արդեօք նորան։ Այն ինչ զարհուրելի ժպիտ էր փոքրիկ դէմքի վերայ։ Կիտոին փոտհութեամբ մատը տարաւ նորա մօտ և կանգնեց սառած՝ փոքրիկ հանդուցեալ առաջ։

Նա մատամբ գիտէր, մատամբ էլ դուշակեց անցածը։ Նա մութը կերպով յիշեց, թէ ինչպէս իւր ընկերներից մինը ձանձրանալով մանկան ողորմաձայն լացից խոստացաւ նորան հանգստացնել և ինչպէս շուտով նորանից յետոյ մանուկը քնեց խորը քնով։ Այժմ էլ դուցէ մանկիկը քնած լինի։ Կիտոին մէկ էլ շարժեց.—չէ, այս քունը նորանից թունդ էր, այժմ էլ բոլորովին չէին բացուել մանկան աչքերը և և չէին տեսնի լոյս աշխարհ, իսկ նորա սառած շրթունքները երբէք խօսել չէին սովորի։ Աղջիկը իւր

աչքերին չէր հաւատում։ Նորան անտանելի էր այդ անխօս, հեղ ու անմռունչ արարածի մօտ մնալ, և նա Ռօբէնին տարաւ իւր մօտ։ Ո՛հ, երանի թէ նորան էլ Աստուած այն հասակում երկինք տանէր, երբ նոյնպիսի անմեղ մանուկ էր։

Ռօբէնի տենդային դրութիւնը համարեա անցաւ. Կիտտիի շրջերում փաթաթուած նա հանգիստ քնած էր աղջկայ ձեռքերի վերայ, իսկ սա նստած մտածում էր։ Մոմը այրուեց. արևելքում լուսոյ մոխրագոյն շերտ երևաց։ Աղջիկը խորը մտածում էր, թէ ինչ պիտի անէր այժմ։

Նորա կեանքը այնպէս մեղքերով լիքն էր, որ մինն էլ աւելացնել ոչինչ չէր նշանակում։ Նա փչացել էր, կորուել էր մօր սիրտը, իսկ այժմ պատճառ դարձաւ փոքրիկ Մէգի ահագին ցաւի։ Մի վերջ էր նորան մնում, և որքան շուտ լինէր, այնքան լաւ։ Նա մնում էր Մէգի դառնալուն, որպէս զի Ռօբէնին նորան յանձնէր։ Իսկ այնուհետև.... Կիտտին ներկայացրեց իրան, թէ ինչպէս ինքը գողունի վաղում է փողոցներով, և մնանում է նաւահանգստին, որի մօտ վաղուց է նաւ չկայ և ուր ոչ ոստիկան կայ և ոչ ոք, որ խանգարէ իրան կամ փրկէ։ Թէ նա այնտեղ ինչպէս պիտի ընկնի գետի մէջ, որի մէջ շատ իր նման ողորմելի, դժբաղդ էակներ վերջ են դրել իրանց կեանքին և գնացել են խաւարի ու մահուան կողմ, որի մասին ինքը չէր էլ մտածում։ Նա այս մասին ոչ որի չէր ասել և եթէ կարող լինէր Աստուծուց մի բան խնդրել, նա կինդրէր նորանից, որ

չկարողանար իւր մայրը իմանալ, թէ ինչպիսի վերջ ունեցաւ նորա կեանքը....

Էնդէլ-Կօրտը վաղուց արդէն դարթնել էր իւր իւր սովորական աղմկով, անէծքներով, հեծեծանքներով, իսկ Կիտտին դարձեալ նստած էր, ընկղմուած իւր խորին մտածմունքի մէջ։ Վերջապէս արևը ուրախ ուրախ ներս նայեց սենեկում լուսաւորելով նորան և Ռօբէնին, նոյնպէս, ինչպէս լուսաւորեց Մէգին Կրիստիի մանկանոցում։ Բայց Կիտտին չէր կամենում աղջային ձեռքից թողնել. նա այնքան սիրելի էր, այնպէս երջանիկ ու հանգիստ իւր քնոյ մէջ, երբ աղջիկը մի փոքր շարժւում էր և նա էլ շարժւում էր և շրթունքները ուռցնում, կարծես նորան նախատելու, որ վրդովում է իրան։ Բացի դորանից, չէ՞ որ այս վերջին անգամն էր բռնել նորան, և թէպէտ ձեռները մի փոքր ցաւացին, բայց նա շարունակեց քնքշութեամբ բռնել մանկան։ Վերջապէս սանդղի վերայ բարձրացող պինդ, մարդու քայլերի ձայն լսուեց և կամաց խօսող Մէգի ձայնը։ Չլինի՞ թէ նորա հայրը վերադարձել է։ Ո՛հ, ինչ տեսարան կտեսնի նա իր առաջ։ Կիտտին շունչը ծածկեց, յուսալով, որ կլսի զարմանքի ու վշտի աղաղակներ։ Սակայն առաջինն անգամ Մէգը խօսեց։

—Ռօբբի. ո՛հ, Ռօբբի, աղաղակեց նա սարսափելի կերպով. ի՞նչ եղաւ փոքրիկ Ռօբբիս։

—Ոչինչ, այստեղ է նա, Մէգ, պատասխանեց Կիտտին վեր թռչելով և շտապով մտնելով մանկանց սենեակը։

Բայց նորա առաջ ոչ թէ ծովագնաց էր կանգ-

նած, այլ մի լաւ հագնուած պարոն, որ աղջկան ձեռքին բռնած ունէր՝ նստացրեց նորան աթոռի վերայ. նորանից յետոյ մնաւ մի չափահաս կին։

—Պօղոս, աղաղակեց Միսարիս Բլօսսօմը։

Բացի իւր հարազատ մօրից էլ ո՛չ ոք չէր ճանաչի առաջուայ ուրախ ու գեղեցիկ աղջկան, որին ծաղիկ էին ասում, չարչարուած գունատ կնոջ կերպարանքից, որը կանգնած էր սենեկի մէջ տեղը։ Մէգն անգամ մոռացաւ իւր երկիւղը Ռոբբիի մասին և բժիշկին էլ հազիւ կարողացաւ վերքաշել նորան, երբ նա մօր ոտների մօտ անզգայ ընկաւ գետին։

—Թողէք՝ ինձ նորա մօտ, գոչեց Միսարիս Բլօսսօմը, յետ մղելով բժշկին. սա իմ ծաղիկս է, ասում եմ ձեզ։ Դուք նորան չճանաչեցիք, բայց ես նորան շատ լաւ եմ յիշում։ Այժմ ես սորա մօտ կլինիմ... Սա իմ աղջիկս է, իմ մանկիկս, իմ գանձը։

Սակայն Միսարիս Բլօսսօմը բժշկի օգնութեամբ անգամ շատ ուշ կարողացաւ ուշքի բերել աղջկան. նոքա տարան նորան ու դրին իւր խղճուկ անկողնում, և յետոյ բժիշկը թողեց նորան միայնակ իւր մօր հետ, իսկ ինքը վերադարձաւ Մէգի մօտ։ Ռոբէնը համարեա բոլորովին առողջ էր, հանգստացրեց նա, բայց այս էլ քնքշութեամբ աւելացրեց, որ մանկիկը եթէ իրան էլ կանչէր, այնու ամենայնիւ կմեռնէր։

—Իմ կարծիքով դուք երկուսդ էլ պիտի այստեղից հեռանաք, ասաց նա։

—Ո՛հ, չէ, չէ, շտապով պատասխանեց Մէգը. ես այստեղ հօրս պիտի սպասեմ. խնդրում եմ, պարոն,

թողէք ինձ ու Ռոբբիին այս սենեկում մինչև նորա վերադառնալը։

—Ուրեմն ո՛վ և իցէ պիտի նայի ձեզ վերայ, ասաց բժիշկը։

—Ո՛չ խնդրեմ այդ մի՛ անէք, պարոն, խնդրեց Մէգը շշնջալով. մայրս ինձ գաղտնիք է հաղորդել, որը ես ո՛չ ոքի չպիտի յայտնեմ, ես նորան խստացայ մեր սենեակը ո՛չ ոքի չթողնել քանի որ հայրիկս տանը չէ։ Այսօր չէր կարելի, որ չմնանէիք թէ դուք, թէ Միսարիս Բլօսսօմը և թէ Կիտտին, իսկ աւելի չի կարելի։

—Զաւակս, քաղցրութեամբ ասաց բժիշկը, մայրիկդ անշուշտ չէր կամենալ քեզ վատ բան անել, ես չեմ կարող այդ գաղտնիքը իմանալ։

—Ո՛չ պատասխանեց Մէգը, սա մեծ գաղտնիք է, խնդրում եմ, որ երբ մանկիկիս կթաղենք մօրս պէս, ինձ ու Ռոբէնին դարձեալ այստեղ թողէք մինչև հօրս գալը։

—Խեղճ երեխայ, ասաց բժիշկ Կրիստին, աչքերը փակելով. դու գիտեցել ես որ մանուկը յիրաւի մեռել է։

Այո՛, պատասխանեց նա. բայց ես Աստծուն չեմ էլ խնդրել նորան կեանք տալու համար, որովհետև մայրիկը միշտ ցանկանում էր նորան իւր հետ վերցնել։ Ես միայն աղօթում էի, որ նա Ռոբէնիս պահի և Պօղեին խելօքացնի։ Այժմ միայն մնում է, որ հայրս գայ։ Ես գիտէի, որ Աստուած է այն ամէն բանն անում, ինչ որ պատահում է. Աստուածաշնչում այդպէս է ասուած. Աստուած խոստանում է Իրա-

նից խնդրողներին ամեն բան տալ։ Ես էլ Նորան խնդրում էի։

Նորա ձայնը նուաղում էր և գլուխը ընկաւ կրծքի վերայ. այժմ, երբ նա նորից տանն էր և Ռոբբէնը առողջ էր երևում—այժը հաւաքուեց դարձեալ։ Բժիշկը Միստրիս Բլոսսոմի հետ դուրս գնացին խորհուրդ անելու, թէ ինչ անեն։ Նոքա վճռեցին, որ Մէգը մինչև Նորա առողջանալը Կիտտիի սենեկում մնայ, իսկ Նորա դուռը փակեն և բանալին Նորան տան։ Բժիշկը աղջկան տարաւ Պոզլի անկողնի մէջ։ Կիտտին կուչեկած նստած էր վառարանի մօտ, երեսը ծնկներում թագցրած և գլուխը երբէք չբարձրացրեց մինչև որ Մէգին բերին, և մօր ցանկութեանը համաձայնութեան նշան տուաւ։ Բժիշկը գնաց։ Միստրիս Բլոսսոմը վճռեց իսկոյն գնալ և ամեն անհրաժեշտ պէտքերը գնել խղճուկ սենեկի համար։

—Պոզլի, ասաց նա, քնքշութեամբ գրկելով Նորան վզից, դու այստեղից չես գնալ և փոքրիկ Մէգին միայնակ չես թողնի, մինչև որ ես Ռոբբիի հետ կերթամ բան առնելու։

—Չէ, չեմ գնա, պատասխանեց Կիտտին, գլուխը չբարձրացնելով։

Մէգը միայնակ մնալով իւր հարևանի հետ, անկողնից բարձրացաւ ոքան Նորա վերաւորուած կուռը թոյլատրեց, և ուշադրութեամբ նայելով Կիտտիի կուչեկած կերպարանքին և կախած գլխին հարցրեց.

—Ուրեմն դուք իսկապէս Պոզլին էք։

—Առաջ էի, խիստ տխուր պատասխանեց Կիտտին։

—Տեսնում էք, ես չէ՞ որ ասում էի, թէ Աստուած մարդ մօտ կտանի քեզ, շարունակեց աղջիկը. Աստուածաշնչում ամեն մի խօսքը ճշմարիտ է։

—Բայց Աստուած որ քրօջդ կենդանի չթողնց, ասաց Կիտտին։

—Ես Նորանից այդ չեմ խնդրել, պատասխանեց Մէգը դողդոջուն ձայնով. ես չգիտէի, թէ մանուկն արդէն մեռել է, և բացի դորանից Նորա համար գուցէ աւելի լաւ էր գնալ մայրիկիս մօտ, Աստծու մօտ։ Էնգէլ-Կօրտում ապրելը լաւ չէ, նա վատ աղջիկ կդառնար։ Բայց եթէ այդ լինի էլ, քաղցրութեամբ աւելացրեց Մէգը, Աստուած կարող է դարձեալ լաւ դարձնել մարդուն, եթէ միայն նա կխնդրի Նորանից այդ։

Փոքրիկ Մէգը լռեց, իսկ խեղճ աղջկայ հոգու մէջ սկսան զարթնել օտարօտի, վաղուց մոռացուած՝ յիշատակներ, մի տեսակ գաղտնի, աստուածային ուժով։ Բառերն ու տեսարանը, հեռու մանկութեան ծանօթները, այժմ երևեցան Նորան խիստ պարզ կերպով։ Նա յիշեց խեղճ մեղաւոր կնոջը, ամենին ատելի, ամենին զզուելի բացի Մէկից, որ ցաւում էր Նորա վերայ, թողնում էր Նորա յանցանքները, և որ սիրում էր լռել Նորան մեղադրողներին և որ ասում էր «հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն»։ Նա յիշեց, թէ ինչպէս ինքը, անմեղ ու մաքուր, կրկնում էր Նորա անվերջ սիրոյ մասին պատմութիւնները և պահպանում էր նրանց իր սրտում։ Խոր անցեալի հեռաւոր արձականքի նման աղօտ կերպով ձայնում էին այժմ Նորա հոգում այս խօսքերը.

ձի սէր քո շարաշարանաց և արեան քրտանց, 'ի սէր Խաչիդ ու տանջանքներիդ ու, 'ի սէր մահուանդ ու թաղման, Տէր Աստուած մեր, ողորմի՛ր մեզ: Ո՜հ, Աստուծոյ գառն, որ քեզ վերայ ես վերցնում աշխարհի մեղքերը, ողորմիր մեզ վերայ:»

—Մէգ, Մէգ, ազօթի՛ր, որ Աստուած ինձ էլ ուղղի, աղաղակեց Կիտոին, համարեա թուշերով Մէգի մօտ և ընկնելով նորա մօտ գետնին ու թագցնելով գունատ դէմքը:

Փոքրիկ Մէգը ձեռքը դրեց աղջկայ քաշ տուած գլխի վերայ:

—Դուք ինքներդ պիտի ազօթէք, ասաց նա մի փոքր մտածելուց յետոյ. ես ի՞նչպէս կարող եմ ձեր փոխանակ խնդրել, երբ դուք ինքներդ չէք խնդրում:

—Ի՞նչ պիտի ասեմ, Մէգ, հարցրեց Կիտոին:

—Եթէ ես ձեր տեղը լինէի, կասէի «Տէր Աստուած, 'ի սէր Յիսուսի Քրիստոսի, օգնիր ինձ դարձեալ լաւ աղջիկ դառնալու և մօրս մխիթարութիւն լինելու մինչև նորա մահը, ամէն:»

Վերնատան սենեակում խորին լռութիւն տիրապետեց. միայն դրսից, փողոցների լարուրինթոսից լսւում էր, մութ, խուլ աղմուկ և խօսակցութիւն: Փոքրիկ Մէգի աչքերի հայեացքը, որ ընկած էր Կիտոյի վերայ, սիրով և կարեկցութեամբ լեցուն էր: Աղջիկը մի բոպէ գլուխը բարձրացնելով, տեսաւ այդ հայեացքը և թեքուելով դէպի անկողինը, սկսեց բարձր ձայնով հառաչել:

—Ո՛հ, Տէր, ասաց նա, խղճա ինձ վերայ, ինձ նորից օրինաւոր կին դարձրու, եթէ կարելի է: Օգ-

նիր ինձ մօրս համար բարի աղջիկ լինելու: Ներիր, 'ի սէր Յիսուսի Քրիստոսի:

Նա երկար ժամանակ հեկեկալով կրկնում էր այս խօսքերը, մինչև որ վերջապէս, նորա ձայնը շշնջի փոխուեց, որ մինչև անգամ Մէգն էլ չլսեց: Աղջիկը շարունակ պառկած էր գետնին, մինչև որ մայրը վերադարձաւ: Միստրիսս Բլոսսոմի դէմքը դեղնած էր, բայց ուրախութիւնից փայլում էր: Առաջին անգամ Պօղէն ուղղակի նորա աչքերին նայեց և բաղաւորութեան ու ցաւի բարձրաձայն աղաղակովը ընկաւ նորա վերայ, գրկեց նորա վեղը ձեռքերով և գլուխը դնելով նորա ուսին, գոչեց.

—Աստուած ինձ կլսի և կխղճա ինձ վերայ, ես դարձեալ քո Պօղէն (ծաղիկը) կլինիմ, մայրիկ:

ԳԼՈՒԽ XIII

Փոքրիկ Մէգի հայրը:

—Միւս օր առաւօտեան թաղեցին երեխային: Վերջին անգամ Մէգը նայեց հանգուցեալի ծիծաղկոտ երեսի վերայ և թափեց նորա վերայ մի քանի արտասուքի կաթիլներ, բայց այնուամենայնիւ չէր նկատում նորա աչքերի մէջ ցաւի նշաններ: Միստրիս Բլոսսոմը տարաւ նորան գերեզմանատուն, իսկ փոքրիկ Մէգին յանձնեց Կիտոին: Այն սենեակը, որի մէջ կենում էին երեխայքը, կողպած էր, իսկ բանալին կախած էր աղջկայ վզից՝ մօրից ստացած անկնիք նա-

մակի հետ միասին։ Մէգը քնի մէջ ևս շատ անգամ սեղմում էր այս թանկագին ծրարը։

—Աղջիկը հանգիստ պառկած էր ճրագի մի կողմում, բայց ուշադրութեամբ հետևում էր փոքրիկ դագաղին, որ հեգնհետ տարածւում էր աղմկալից փողոցների մէջ մինչև գերեզմանատուն Միստրիս Բլոսսոմի և նորա ծանօթ կնոջ ձեռքով։ Ցանկարծ Կիտտին լսեց սանդուղքների վերայից մի ոտի ձայն։— «Երևի բժիշկ Կրիստին է», մտածում էր նա։ Բայց ի՞նչու նա անցաւ Մէգի առաջուայ սենեկի առաջից և ի՞նչու համար դուռը ծեծում է։ Երբ բաց արեց դուռը, Կիտտին տեսաւ մի նաւապետ, որի շորերը պատառոտած և փոշոտած էին։ Ինչպէս երևում է, նա վերադառնում էր երկար ճանապարհորդութիւնից։ Նորա այրուած երեսը ցոյց էր տալիս, որ շատ տեսակ կլիմաների տակ է անցկացրել իւր կեանքը, իսկ նորա հեռատես սև աչքերը ցոյց էին տալիս արդէն որ նա մի հմուտ նաւապետ է։ Երբ Կիտտին բաց արեց իր դուռը, նա շուտով երեսը շուռ տուեց։

—Զգիտէ՞ք արդեօք, մտաղ, թէ ինչ է պատահել իմ կին Պէգգի Ֆլէմինգի և նորա որդուց հետ, ասաց նա։ Նոքա այստեղ էին բնակվում։ Ինձ գրել էր Պէգգին, որ նրանք քաշվել են վերնատուն։

—Այս հայրի՞կն է, ձայն տուեց փոքրիկ Մէգը անկողնի միջից, որ փռած ունէր յատակի վերայ։ Ես այստեղ եմ, հայրիկ, մայրիկը մեռաւ, մեռաւ նոյնպէս և քոյրիկը.... Ա՞խ, հայրի՛կ, սիրելի հայրիկ, վերջապէս դու վերադարձար։ Մէգի հայրը շտապով գնաց սենեակ՝ Կիտտիի մօտ, ուր նստած էր դեռ ևս

անկողնի վերայ աղջիկը և դողում էր. այս տեսնելուն պէս՝ պարզեց իւր հիւանդ ձեռքերը դէպի նա։ Նա նստեց մահճի վերայ և գրկեց նորան. մի քանի րոպէից յետոյ փոքրիկ Մէգը քնեց նորա գրկի մէջ ինչպէս մեռած։

—Վերջապէս նա ծանր կերպով ախ քաշեց։

—Ո՞հ, հայր ես պահպանեցի Ռոբէնին և փողերը. ամէն բան պահպանեցի միայն քուրիկը մեռաւ։ Բայց դու մի՛ ցաւիր, որովհետև նա արժանի չէր այսպիսի տեղում ապրելու։

—Պատմեցէ՛ք ինձ մանրամասն, խնդրում եմ ձեզ ասաց Ռոբէն Ֆլէմինգը նայելով Կիտտիի երեսին, և միևնոյն ժամանակ բռնած ունէր դեռ ևս աղջկան իր գրկի մէջ։ Կիտտին պատմեց բոլորը, ինչ որ գիտէր Մէգի առանձնական կեանքի վերայ և նորա հոգսերի մասին. պատմեց և այն, թէ ինչպէս նա չէր թոյլ տալիս իւր սենեակը մտնել։ Հայրը որ լսում էր այս ամենին, խորը հառաչեց և քնքուշ կերպով համբուրեց նորա գունատ կնճռված երեսը։

—Ի՞նչու համար չէր թոյլ տալի Մէգը իւր հարևաններին, թէկուզ օրինակի համար Կիտտիին, որ գան իրան մօտ և օգնեն։

—Ես մայրիկին խոստացայ, որ ոչ ոքի չթոյլ տամ մեզ մօտ, փսփսաց նորա ականջին, որպէս զի չտեսնեն այն արկղը, որ մահճակալի տակն է և վերցնեին նորա միջի բաները։ Այնտեղ, հայրիկ, պահած են ձեր ընկերոջ փողերը և մենք դրա համար շատ էինք վախենում. ահա ինձ մօտ է բանալին և նամակը, որ մայրիկի անունովն է եկել, նորա մահուանից յետոյ։

—Այո՛, այս իմ նամակն է, որ ես հիւանդանոցից ուղարկել եմ Պէզզիի վերայ, ասաց հայրը, տնտղելով նամակը. ես ասնու քահանային խնդրեցի, որ այս նամակը գրի մօրդ, թէ նա ինչ պէտք է անէ, քանի որ ես չեմ եկել: Այս փողերը իմն է, Մէգ և ես նամակի մէջ ասած ունէի, որ մի մասը վերցնի և գործ դնէ իւր և երեխաների վերայ:

—Բայց մայրիկը այնպէս էր կարծում, որ ձեր ընկերինն է, դորա համար մենք աւելի վախենում էինք, որ չգողանան:

—Այդ իմ մեղն է, պատասխանեց Բոբէն Ֆլէմինգը: Ես վախենում էի որ մայրդ կմնխէր, եթէ իմանար որ իմ փողերն է: Իսկ եթէ ես միայն իմանայի....

—Նա ոչինչ չխօսեց և իւր ձեռքերով միշտ հարթում էր նորա գլխի մազերը: Մէգը միևնոյն ժամանակ զգաց, թէ ինչպէս տաք արտասուքի կաթիլները ընկան նորա ճակատի վերայ:

—Մի լար, հայրիկ, ասում էր նա, մեկնելով իւր թոյլ ձեռը դէպի նորա երեսը, Աստուած մեզ չմոռացաւ, նա հոգս էր տանում և քուրիկի վերայ, թէև նա մեռել է: Նա ամեն բան անում էր մեզ համար. ամեն բան կատարում էր, ինչ որ ես խնդրում էի նորանից:

—Բայց դու խնդրել ես Նորան, որ ես բարի հայր լինիմ, ասաց Ֆլէմինգը:

—Չէ՞ որ դու միշտ բարի ես եղել մեզ հետ, ասաց Մէգը զարմանալով—դու մեզ շատ լաւ ծեծում, երբ հարբում ես: Ես և Բոբէնը միշտ աղօթում ենք,

որ Աստուած օրհնէ հայրիկին: Թէև ես չեմ հասկանում, թէ ինչ է աղօթելը, բայց գիտեմ, որ մի լաւ բան է:

—Ո՜հ, հառաչեց Ֆլէմինգը: Նա իսկապէս օրհնեց ինձ, ցոյց էր տալի իմ հիւանդութեան ժամանակ, թէ ինչպիսի մեղաւոր եմ ես. թէ ինչպէս Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ ազատելու մեղաւորներին և որ այս մեղաւորներից առաջինը ես եմ: Իմ վերաբերութեամբ ես հաստատ կասեմ, որ ճշմարիտ է: Բայց Սուրբ գրքի միջը ասուած է, որ Նա սիրում է ինձ և Իւր անձը մահու մատնեց իմ փոխարէն: Ես այդ զգում եմ և ճշմարիտ է: Կեանքը ինձ այդ բոլորը ցոյց տուեց: Բացի Յիսուս Քրիստոսից ես ոչ ոքի չեմ դարձել որ ինձպիսի մի խեղճ, անպէտք, հարբան, վայրենի անասունի նմանուած մարդուն, դարձնում է կրկին պատուաւոր մարդ: Երբ ես հիւանդ պառկած էի, այս բոլորի վերայ էլ մտածում էի և այժմ էլ փառք Աստուծոյ, նմանում եմ քրիստոնեայի, քան թէ առաջ էի: Ահա՛, թէ ինչ է նշանակում Աստուծոյ օրհնութիւն ստանալ, իմ փոքրիկ Մէգ:

—Այս միևնոյն ժամանակին դուռը բացվեց և Միստրիս Բլոսսոմը ներս մտաւ Ռոբէնի հետ: Երեխան մի ամբողջ տարի էր, ինչ որ չէր տեսել հօրը. նա յետ յետ էր քաշվում պատին քսվելով և մնում էր Միստրիս Բլոսսոմի հետևը: Մէգը ուրախ ուրախ կանչեց նորան:

—Մօտ արի, փոքրիկ Ռոբբի՛, ասաց նա, այս հայրիկն է, որին մենք այդպէս երկար սպասում էինք.

Նա սկզբից փոքր ինչ այլայլվեց, հայրիկ, բայց նա շուտով կծանօթանայ ձեզ հետ և դուք կսիրէք նոր-բան։

—Ճշմարիտ որ՝ մի քանի րոպէից յետոյ Ռօբէնը ընտելացաւ հօր հետ և փաթաթվում էր նորա ծունկ-ներին, բայց Մէգը Միստրիսս Բլօսսօմի խնդիրքով նո-րից պառկեց։ Ֆլէմինգը մի քանի րոպէ լուռ կեր-պով փաղաքշում էր իւր փոքրիկին. արտասուքը թափ-վում էր նորա աչքերից, երբ յիշում էր Մէգի դառը պատմութիւնը։

—Իմ խելքով այստեղ անյարմար է, որ մի այրի իւր որդկերանցով բնակվի, ասաց Միստրիս Բլօսսօմը—ես վախենում եմ մինչև անգամ անցնել դրան առ-ջևից։ Դուք երևի չէք կամենում այստեղ մնալ Միս-տէր Ֆլէմինգ։

—Ո՛չ, ո՛չ, պատասխանեց նա, գլուխը շարժելով—այստեղ ամենևին յարմար չէ մի պատուաւոր քրիս-տոնէի բնակութեան համար։

—Ուրեմն եթէ այդպէս է, եկէք մեզ մօտ, քանի որ ձեր տունը չէք սարքել, ուրախ ուրախ ասաց Միստ-րիս Բլօսսօմը։ Մենք Միստէր Ժօրժի հետ այդ բանի վերայ խօսեցել ենք։ Նա ասաց մերբ փոքրիկ Մէ-գի հայրը կգայ, թող նրանք ամենքն էլ այստեղ գան և՛ Պօղոսն և երեխաները։ Դուք Պօղոսի և փոք-րիկների հետ միասին կկենաք, իսկ ես հօր հետ։ Ե-թէ նա չուզենայ, մենք փոքր ինչ նորա միտքը կփո-խենք—նաւապետները փափկութեան սովոր չեն։» Այսպէս, եթէ դուք հակառակ ասելիք չունիք, գործը

վերջացած է, իսկ եթէ ձեզ մի որևիցէ կերպով ան-յարմար է, ասացէք ուղղակի։

Բայց Ռօբէն Ֆլէմինգը հակառակն ասելու ոչինչ չունէր, այս առաջարկութիւնը շնորհակալութեամբ ընդունեց։ Նա կամենում էր հեռանալ կեղտոտ և կռուասէր Էնդէլ-Կօրտից։ Բերեց արկղը Կիտաթի սե-նեակը և բաց արեց փոքրիկ Մէգի առաջին և հա-նեց մօտ քառասուն Ֆունտանոց մի ծրար և մի քա-նի պարտամուրհակներ, որ նա պահ էր տուել. նա շատ տխուր կերպով նայում էր սրանց վերայ։ Երբ պահեց այս բոլորը, նա նորից կողպեց Մէգի առաջուայ սե-նեակը և բռնելով աղջկայ ձեռքից, բարձրացաւ սան-դուղից Միստրիս Բլօսսօմի, Պօղոսի և Ռօբէնի հետ։

—Առաջուայ պէս Էնդէլ Կօրտի դուրսը աղաղակ և կռիւ էր. նորա ցեխոտ, քարած փողոցով վազում էին էլի պատառոտված շորերով երեխաները։ Նրանք ամենն էլ հաւաքվեցան Մէգի և նորա հօր շուրջ կողմը և խմբովին ճանապարհ ձգեցին։ Աղջիկը մի անգամ ևս նայեց իւր սենեկի բարձր պատուհանի վերայ, որտեղ շատ անգամ նայում էր, թէ երբ պէտք է տեսնէ իւր հայրիկին, որին այսքան ժամանակ սպա-սում էր։ Յետոյ տխուր հայեացքով նայեց իւր շուրջ գտնուող երեխաների վերայ, փակեց իւր աչքերը և ինքն իրան փափաց այնպէս կամաց, որ հայրն էլ չլսեցաւ. նա խօսում էր աւելի սրտով, քան թէ շրթունքներով։

—Տէր Աստուած ամենին օրհնիր և ամենին էլ բարի դարձրու։

ԳԼՈՒԽ XIV

Փոքրիկ Մէգը գնում է։

—Անցաւ մի ամիս Ռօբէն Ֆլէմինգի վերադարձից յետոյ։ Միստրիս Բլօսսոմի փոքրիկ տանը եկաւ մի անգամ բժիշկ Կրիստին։

Նա առաջ էլ էր եղել նորա մօտ, բայց այս անգամ անձամբ կամեցաւ հաղորդել Միստրիս Բլօսսոմին մի նախագիծ և այդ մասին իմանալ նորա կարծիքը։

—Սիր, պատասխանեց նա, իմ հասակակից կանանց համար, որոնք այսքան ժամանակ բնակվել են գիւղում հանաք բան չէ ծովով ճանապարհորդելը։ Բայց եթէ դուք ամէն կողմից այս բանը յարմար էք համարում Պօղլի համար, ես համաձայն եմ, մանաւանդ որ Միստէր Ֆլէմինգն էլ նոյնպէս կամենում է գալ երեխաներով մեզ հետ, իսկ ես նայում եմ Մէգի և Ռօբբիի վերայ, ինչպէս իմ հարազատ որդուց։ Ես ամէն բան գիտեմ—լուալ, կարել, փոքր ինչ էլ ծախս անել, դեռ մի տաս տարի էլ կարող եմ աշխատել։ Բացի այդ Մէգը կմեծանայ և կդառնայ մի հասակաւոր կին, իսկ Պօղլի մասին ոչինչ չեմ ասում—նա այժմ էլ կարող է ինքն իրայ համար հոգ տանել։ Չեմ ասում, թէ ես սիրում եմ ծովը, ընդհակառակը, բայց ինչ արած, պէտք է մի կերպով ընտելանալ։ Միստէր Ֆլէմինգին կյանձնենք նաւը, որ մի գուցէ մի անբաղաւորութիւն պատահի։ Մի խօսքով

ես պատրաստ կլինեմ ամէն ժամանակ ճանապարհ ընկնել, երբ նաւը պատրաստ կլինի։

—Այդպէս էլ ամէն բան կարգադրեցին։ Պատրաստութիւնը մեծ չէր։ Մէգի կարմիր շորերը և միւս բաները թափեցին։ Միստրիս Բլօսսոմը գնաց վերջին անգամ մտիկ տալու իւր մայրենի գիւղը, բայց Պօղլին չկամեցաւ նորա հետ գնալ—այնտեղ բոլորն էլ ճանաչում էին նրան։ Նա Մէգի և Ռօբէնի հետ գնաց Տեմպլն այդին իւր վերջին մնաստարութիւն տալու։ Այս նորա առաջին անգամ տանից դուրս գալն էր, քանի որ նա բնակւում էր մօր մօտ։ Ճանապարհին՝ պատահմամբ մի անցաւորի հանդիպելով, քաշւում էր և կարմրում։ դեռի հանելով նրանք կանգնեցին և նայում էին, բայց կատաղի աչքերը տեսնելուն պէս Պօղլի դողը բռնեց. նա հեռացաւ և նստեց ոթոռի վերայ։ Նա վերջը խոստովանեց, որ աւելի ուրախ է վերադառնալ տուն և սպասել մինչև այն օրը, երբ Միստէր Ժօրժը տանել կտայ իւրեանց փոքրիկ պայուսակները և իրանք էլ նորա հետ միասին նաւահանգիստ կգնան։

Բժիշկ Կրիստին իւր կնոջ հետ միասին եկաւ նորանց ճանապարհ ձգելու և շատ քնքուշ կերպով համբուրեցին Մէգին մնաս բարովն ասելիս։ Հենց դուրս գալուց մի բոպէ առաջ Միստէր Ժօրժը բռնեց Մէգի ձեռքն իւր մի ձեռքով, իսկ միւսը դրեց գլխի վերայ։

—Կրկնիր մեզ, փոքրիկ, այն խօսքերը, ասում էր նա, որոց դու հաւատում էիր և որոնցով դու ապրում էիր։

—Այն խօսքերն որ ես և մայրիկը լսում էինք փողոցում տէր Հօրից, հարցրեց Մէգը։

Սիսաէր ժողովը լուռթեամբ շարժեց գլուխը։

—Ընքա բոլորովին ճշմարիտ են, ասաց ադջիկը, որովհետև նոյն խօսքերը Յիսուսի Քրիստոսի ասածներն են և Աստուածաշնչումն են գրուած։ Զի՞նչ որ Աստուած հենց այնպէս էլ արեց, ինչպէս որ խնդրեցիք։ ահա նոքա։ «Եթէ դուք հաւատք բարի պարգևներ է.ք տալիս ձեր որդոց, որչափ առաւել ձեր երկնաւոր Հայրը բարիք կտայ Իրանից խնդրողներին։

———

ՀՀ Ազգային գրադարան
NL0109850